Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang.“

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

Թիֆլիզի Ազնուական. Կալ. բանկի թատրոն
Շուտով կայանալու է
ԱՇԽԱՐՀԻՍ ՄԻԱԿ
հռչակաւոր լիրիկական տենոր
ՄԱԶԻՆԻԻ
ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ
Այս նուագահանդէսին տեղեր ստանալու համար վաղօրօք պէտք է ստորագրուել պ. Բ. Միրիմանեանի երաժշտական դէպոյում, Դվորցովայա փ. (1—1)

ԹԻՖԼԻԶԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ԿՐԱԿԻՑ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ի գիտութիւն ընկերութեան պ. պ. անդամների, որ կանոնադրութեան 37 րդ յօդուածի համաձայն 1894 թուականի ընկերութեան գործերի հաշիւները, գրքերի և փաստաթղթերի հետ միասին ԲԱՑ ԵՆ վարչութեան բնակարանում առաւօտեան ժամը 1-ից մինչև ժամը 3-ը կէսօրից յետոյ ապահովողների նկատողութեանց համար։ (1—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը։
Հայկական սարսափների մասին նոր տեղեկութիւններ։
Կ. Պոլսից։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Կանանց բժշկական ճեմարան։ Եկատերինոդարից։ «Մայիս» հայ ժողովրդական բանաստեղծի մահը։ Պ. Իգմալեանի առողջութիւնը։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Գէօկչայից։ Իգական գիմնազիա Բաքւում։ Պետերբուրգից։ Նոր վիրաբուժական հիւանդանոց։ Կեղծ տասն ռուբլիանոցներ։ Ռուսաց երկաթուղիների այժմեան դրութիւնը։ Թիֆլ. Արտիստ. Ընկեր. առաջին օպերան։
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Կարնից
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—«Չարչարանքի շաբաթը», եպ. քահ. Նազարեանի։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Աստուած չճանաչող։
ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ. — Ս. Արամեանի կնոջն սպանելու փորձը։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐ
ՁԱՆԱԶԱՆ
ԹՂԹԱԿՑԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

(«The Daily News», մարտի 5)

Կ. Պոլիս 15 փետր.

Ամսոյս 11-ին Հայոց բոլոր եկեղեցիներում կարդացուեցաւ Պատրիարքի անդրանիկ հովուական նամակը. բազմաթիւ ժողովուրդը լսում էր ամենամեծ ուշադրութեամբ։ Հայոց ազգի բարօրութեան և ազգային եկեղեցու հաստատութեան համար հովուականի մէջ յիշուած մաղթանքներին աճագին բազմութիւնը պատասխանում էր երկարատև ու սրտեռանդն «Ամէն»ով։ Իսկ Սուլթանի արևշատութեան համար մէջ բերուած սովորական փափագը լսուեց լռութեան մէջ անցաւ։ Այս առաջին հովուական թղթից յետոյ Հայերը և'ս աւելի սկսան սիրել իրենց Պատրիարքին, որ եւրոպական շրջանների մէջ էլ մեծ յարգանք է վայելում։

Ամսոյս 12-ին, Սուլթանի ծննդեան տարեդարձի օրը, Պատրիարքը պալատ գնաց շնորհաւորութիւն մատուցանելու Սուլթանին։ Վեհապետը հաճեցաւ անձամբ ընդունել նրան, հրաւիրեց աթոռի վրայ նստել իւր գահոյքի մօտ և գովեց Պատրիարքի այն աներկբայելի յատկութիւնները, որոնք, նրա ասելով, վայել են հայ ազգի պարագլուխ անձնաւորութեան։ Թըւում է թէ Միւնիր բէյը կարողացել է այնպէս պատկերացնել Սուլթանի առջև Պատրիարքին, ինչպէս որ գա է, և թէ Միապետը համոզուած է, որ գործ ունի այժմ մի երկրորդ Ներսէսի հետ։ Այս է նրա անսովոր սիրելութեան պատճառը,—անսովոր Ներսէսի մահուանից յետոյ՝ վերաբերմամբ դէպի վերջնոյս յաջորդ Վեհապետեան և Աշըգեան պատրիարքները, որոնք լոկ ստրկական հպատակութեան գործիքներ էին։

Մէտ երկու շաբաթ է, որ պալատի ապ. պաշտօնեայ Ղալի-Օսման փաշան անհետացել է։ Ոմանք ասում են, թէ նա վաղուց արդէն հալածվում էր իւր ազատամիտ գաղափարների պատճառով, որ ունէր երկրի վարչութեան մասին։

Հայերի կրած չարչարանքները քննելու համար Եւրոպական Կոմմիսիա նշանակուելուց 'ի վեր Թիւրք ամբոխը մոլեգնել է պոլսարնակ եւրոպացոց դէմ, իսկ հայոց դէմ զգացած զայրոյթը և'ս աւելի սաստկացել։

Ամսոյս 12-ին մայրաքաղաքիս օտարազգի բնակիչները ազդարարութիւն էին ստացել դեսպաններից, որպէս զի տանը մնան գիշերով և դուրս չգան հրավառութեան ժամանակ. վտանգ էին սպասում ֆանատիկոս ժողովրդի զրգռութիւնից։ Տագնապը օր ըստ օրէ սաստկանում է։

Այսօր Հայոց Պատրիարքն ուղարկեց Սուլթանին Վեհապետի անձամբ պահանջած տեղեկագիրը հայ ազգի գանգատների մասին. միևնոյն թղթի պատճէնն էլ ուղարկեց Բ. Դռան։ Այս կարևոր գրութեան մէջ մանրամասն նկարագրուած են խնդրի երեք մասերը։

Առաջինը վերաբերում է կրօնականին։ Սրբազան Պատրիարքը մի առ մի յիշատակում է քրիստոնէական կրօնին հասած բազմաթիւ զրկանքները, վանքերի աւերակ վիճակը, եկեղեցիների քայքայումը և փակումը, եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների բանտարկումն և աքսորումը, նրանց կրած թշնամանքն ու տանջանքը, սուրբ վայրերի անարգումն ու պղծումը, սրբազան գրքերի հալածումը, նուիրական տեղերի աւերումը և այլն։

Գալով հարցի քաղաքական կողմին՝ Պատրիարք հայրը հանգամանօրէն յառաջ է բերում հայ ազգի անտանելի քաղաքական վիճակը Թիւրքիայի ամէն անկիւններում, այդ ազգի դէմ յարուցուած ամէն տեսակ հալածանքները, յափշտակութեան, ասպատակութեան, բռնահարութեան, սպանութեան և կոտորածի, գրպարտութեան ու կողոպուտի դէպքերը, հարկերի անչափ ծանրութիւնը, հարկահանների գործ դրած գիւղային միջոցները, ապօրինի բանտարկութիւնները, աքսորն ու տանջանքը, կալանաւոր քրիստոնեաների երկար ցուցակը և վերջապէս Հայոց գոյքի, պատուի և կեանքի բացարձակ անապահովութիւնը։

Խնդրի ազգային մասում Նորին Սրբազնութիւնը արձանագրում է այլ և այլ սուլթանների կողմից հայ ազգին տրուած և վաւերացուած արտօնութիւնները, որոնք այս վերջին տարիներս մի առ մի խլուած են արդի կառավարութեան ձեռքով։ Նա բողոքում է անթիւ վարչական արգելքների դէմ, որոնց հանդիպում են այժմ ազգային դաստիարակութիւնը, ազգային գրականութիւնն ու յառաջադիմութիւնը ամեն մի քայլափոխի վրայ։

Վերջապէս նա խնդրում է լիակատար կրօնական համբերողութեան, ստացուածքի, պատուի և կեանքի ապահովութիւն, կաշառքի հալածանքի սանձահարումն, բոլոր ազգային արտօնութեանց վերականգնումն, քրիստոնեայ կալանաւորների արձակումն, երկրի զանազան մասերում նստած աշխարհածանօթ բռնակալների պատուհաս և այլն։

Փօխումէնտը լի է ամենօրեայ փաստերով և մանրամասն դէպքերով։ Սրբազան հայրը ի նկատ առնելով երկրի դառն վիճակը և վերահաս ճգնաժամը, շատ քնքշութիւն չէ բանեցնում. այս պատճառով նրա ոճն էլ անպաճոյճ է և ուժգին, գա հայ ազգի հառաչանաց արձագանքն է։ Փօխումէնտի մի ուրիշ օրինակն առաքուելու է Բրիտանական դեսպանին։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ գրում են «Նովոստի» լրագրին փետրվարի 13-ից.—«Կ. Պոլսում դադարել են հայկական ռէֆորմների մասին խօսելուց։ Բ. Դուռն ինչպէս երևում է հանգստացել է, ընդունելով մի քանի վկաների աննպաստ ցուցմունքներին քննիչ Մասնաժողովին Մուշում։ Մի քանի շաբաթ առաջ պնդում էին թէ կառավարութեան փաշան չորս նահանգների, այն է Սվազի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի նահանգապետ պիտի նշանակուի և այդ նահանգները պիտի միանան։ Այդ ծրագրի համար այժմ խօսք անգամ չկայ։ Բ. Դուռը հաւատացած է, որ վերջին շփոթութիւնները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում, անհետ կանցնեն առանց հարկադրելու որ Տաճկաստանն իր շահերին հակառակ միջոցներ ձեռք առնի։ Կ. Պոլսում զգում են, որ Գերմանիան իր գործունէութեան թրքամոլական եղանակով քիչ չնպաստեց Անգլիացիների պաշտպանութեանը հայոց դատին։ Անցեալ հինգշաբթի Սուլթանը վճռեց ուղարկել Բերլին մի արտակարգ դեսպանութիւն, որ պիտի մատուցանէ Վիլհելմ II-ին պատուաւոր սուր, բրիլեանտներով զարդարած։ Հետևեալ օրը պալատ հրաւիրուեց գերմանական դեսպան իշխան Ռադոլին։ Սուլթանը հաղորդեց նրան իր մտադրութիւնը և խնդրեց այդ մասին տեղեկացնել Վիլհելմ կայսրին»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքի լրագրները լսել են որ կանանց բժշկական ճեմարանի բացման հարցը վճռուած է դրական մտքով։

***

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ մեզ գրում են.

Կիւրակէ օրը ժամը 10-ին Նորին Վեհափառութիւնն իջաւ եկեղեցի, փառաւոր քարոզ խօսեց՝ բնաբան

ՖԵԼԻԵՏՕՆ

ԱՍՏՈՒԱԾ ՉՃԱՆԱՉՈՂ

(ԹԱՆՂՐԻ ԹԱՆԸՄԱԶ)

Բաշգեղը գտնվում է ստորին Բասէնում Մայր-Արաքսի աջ ափին, բարձրաւանդակ տեղ։ Սուկաւ սարը, որին Թուրք ու հայ առհասարակ «Բէօսա-դաղ» են ասում, այնպէս պարզ ու մօտիկ է երևում այդ գիւղից, կարծես ափիդ միջին։ Սակայն այդ փենապանծ գագաթը Տաճկա-հայաստանումն է։ Ո՜րքան ակնահաճոյ տեսարան է «Բէօսա-դաղը» առաւօտեան և իրիկնապահի պարզ ժամերին, մարդ նայելուց չի կշտանում. զմայլվում է երբ կանգնած է Բաշգեղի նոր գերեզմանատանում—Աբրամի թմբի մօտ ու այնտեղից դիտում է շրջակայ տեսարանները՝ բարձր լեռների, խոր-խոր ձորերի և անհուն, անվերջ հորիզոնի...

1895 թ. յունվարին Բաշգեղ հասնելով իջել էի «բաշմուխտարի» օդայում։ «Բաշմուխտար» նշանակում է եօթ գիւղի տանուտէրների գլխաւոր։ Այդ պաշտօնի տէրը մի լխաիրտ և հիւրասէր անձն էր։ Նրա քսից անցնող շատ քիչ ուղևոր կը լինի, որ նրա օջաղում հաց կտրած չլինի։ Նրա օդան ամեն երեկոյ լի է ուղևորներով ու պանդուխտներով։ Դրացի, թէ օտարական՝ ամենքն էլ մեծ յարգանքով ու ակնածութեամբ էին վերաբերվում թէ դէպի բաշմուխտար Սիմոնը, որ 40 տարեկան մարդ է, և թէ դէպի նրա օջախը։

Զրոյցներից նկատում էի, որ այդ նահապետական օջաղում քահանաներ եմ եկել են, որի պատճառով նրանց ազգը «տէր»-ով էր սկսվում. Բայց ինձ համար մի բան մութն էր. չգիտէի ինչու այդ հիւրասէր տանը մի սոսկալի անուն էր կպած։ Գիտէի որ հայ գաւառներում սովորութիւն կայ մի անձի կամ օջախի փութանուն (մականուն) կպցնել, օրինակ Իծարածանց, Երկանափէշանց, Օձխուզողանց, Ադուէսուտողանց, Կաշիկրծողանց և այլ ծիծաղաշարժ անուններ։ Բայց երբէք չէի լսել, որ մի օջաղի անուն լինի «Աստուած չճանաչողանց»։ Բասէնու բոլոր ժողովուրդը բաշմուխտար Սիմոնի տանը կանչում էր «Թանղրի թանըմազանց». գա այնպիսի մեծ քիբս ու սև բիծ էր, որ չկարծեմ թէ երկրի վրայ պատուի զգացում ունեցող մի մարդ յանձն առնէր այդ անարգանքը որ և է գնով։

Առաջ կարծեցի, թէ գիւղացիք նախանձից ու չարակամութիւնից են սարքել այդ անունը. բայց երբ նկատեցի որ բացի գրացիներից, բաշմուխտարն ու իւր բարեկամներն էլ են այդ անունը գործածում իբրև նախատինք չպարունակող գարձուածք, հետաքրքրութիւնս աւելի վառուեց։ Վճռեցի անպատճառ իմանալ տարակոյս պատճառող ազգանուան սկզբնաւորութիւնն ու ծագումը։

Հետևեալ օրը գնացել էի ժամ՝ ձեռագիր աւետարանները նայելու, նրանց յիշատակարանները վերցնելու. տեսայ քուրքի մէջ կոլոլուած մի ծերունի։ Դրան հարց ու փորձ անելով բերի հասցրի բաշմուխտարանց ազգաբանութեան մօտ և յետոյ հարցրի.—Աստուած սիրես, ծերուկ, իմ տարակոյսը փարատիր. ձեր գիւղի բաշմուխտարը հիւրասէր, հացով մարդ է երևում, պատճառն ինչ է, որ նրանց «Թանղրի թանըմազանց» այսինքն «Աստուած չճանաչողանց» են կանչում։

Ծերունին կիբուկը սագարեց ու հետևեալը պատմեց բաշմուխտարանց օջաղի մասին.

«Ինչպէս մենք, այսպէս էլ բաշմուխտարի պապերը այստեղացի չեն. նրանք գաղթել, եկել են «Խասգեղից», որ Մուշ քաղաքի մօտերքումն է։ Ինչպէս հիմի կողոպտվում, յափշտակվում են հայ գեղերը քրդերից, թուրքերից, այնպէս էլ 100—200 տարի առաջ շատ նեղ օրի մէջ է եղել Խասգեղի հայ ժողովուրդը մուլթազիմների ձեռից։ Բայց գիտես ինչ է նշանակում թուրք մուլթազիմներ. Տարօնի երկրագործ հայը նրանց միայն անգամ դրանց պատկերը տեսնելիս վեր է թռչում և սարսափած կուչ գալիս։ Տասանորդ ժողովելու անունով շրջում էին կալերը և 5-ից մէկը տասանորդ-բաժրա վերցնում, հարկ ժողովելու համար 10—20 ձիաւորով ընկնում էին գիւղերը, և պահանջում՝ ինչքան իրանց կամքն էր։ Իրանք էլ էին ժողովրդի հաշուով կերակրվում, իրանց ձիանն էլ. գիւղում ոչ հաւ էր մնում, ոչ գարի։ Անկողինները տներից հանում, իրանց ձիաների տակ փռել էին տալիս, որ կակուղ բանի վրայ կանգնեն։ Ով փող չունէր, հարկահաւաքները նրանց ասում էին—զուր մի աղալիր, քեզ ոչ ներողն ենք և ոչ լսողը. ուզում ես ծեծից ու բանտից ազատուել, կնիկդ գնա բեր մեզ մօտ գրաւ թող։ Մենք քո տեղ կը վճարենք և քո կնկանն էլ մեր տանը կը բանացնենք, երբ փարայ կը բերես, կնիկդ կը տանես։ Թուրքերի ձեռից հայերը անտանելի նեղութիւն էին քաշում։ Եթէ մէկը հարկի փարա չունէր ու քիչ բարկացրած էր լինում հարկահաւաքներին, ինչքան էլ աղերսում էր, ժամանակամիջոց չէին տալիս, որ ճարի, յետոյ տայ, իսկոյն տները քանդում էին ու գերանները «բաղալխայի» (գլխահարկ) տեղ վաճառում։ Տանտէրերը՝ աղջիկ ու կնիկմնում էին մերկ, բաց երկնքի տակ։

Ժողովրդի մէջ ույժ չէր մնացել—շարունակ ծեծ ու պատիժ ուտելուց զարձել էին վախկոտ, թոյլ։ Ողջ գիւղի մէջ միայն մի մարդ կար, որից թուրքերը ակնածում՝ քաշվում էին, իսկ հայերը էրանց հօր տեղ ընդունում, պատվում։ Այդ մարդը Աբրամն էր, որին թուրքերը չգիտէին ինչ անուն տան, որ սիրտները հովանայ։ Երբեմն «գեավուր» էին ասում, երբեմն «եալղուզգալ», որ Աբրամին վշտացնեն, սրտին դիպչեն. բայց նա քառ օձի պէս գլուխը բաշ արած իր բանին էր գնում ու շանթում, գաղում այն հարստահարիչներին, որոնց գաշտում մենակ պատահում էր։ Հերիք էր, որ փանջէն (հինգ մատը) թուրքի կամ քրդի գոտիկը հասնէր, գիտէր թէ մուր տառ շունչը որտեղով պիտի հանի։ Հայերին արգելուած էր սուր, թուր պահել, գանակ ունեցողին անգամ դազար կար. կամ դարուգարդակ պիտի լինէին հայերը կամ շատ շատ մի փայտի կտոր ունենային. իսկ Աբրամը միշտ իւր կռնատակին այնպէս փայտ էր մանածում, զոմշաքը շույ էլ հասու, որ ուզողի քներակին մի անգամ խփելով պարանկը զցէր։ Եւ ինչու չէր անէր. մի հասակ ունէր բարդի ծառի չափ, զոմշի պէս ուժեղ էր, առյանի նը ման սրտոտ։ Ինքը զանգին մարդ էր, ոչխար, տաւար, ջաղաց, ձիթհանք, զոմ, չայիր, արտեր, ամենն էլ ունէր։

Թուրք ու քուրդ նրան թողած՝ միւսներին կողոպտում, հոգին էին հանաւարեցնում։ Ինչքան էլ հարստահարուածներն ուզում էին գնալ Մուշ գանգատուելու իրանց ցաւերը այնտեղի փաշային, գայմաղամը չէր թողնում, այլ աւելի յորդորում էր «շահնային» և այլ հարկահաններին, որ ինչ ուզենան հայերից պահանջեն։

Աբրամը այս բաները տեսնելով փրփրում՝ եփ էր գալիս, ատամները կրճտում, բայց մենակ ինչ կարող էր անել։ Երբեմն երբ տեսնում էր գրացուն աչքաբաց զրկում են, համբէս էր դուրս գալիս պաշտպանում, թուրքերից, քրդերից այս բանը խլում էլ ետ հային տալիս։ Բայց վաղուց էր, Աբրամի վրայ խէթ աչքով էին նայում թէ գայմաղամը և թէ բոլոր մուլթազիմները. Լսելով որ նա հայերին օգնում է, հարկահաւաքների դէմ գրգռում է. մէջլիս էին կանչում, հարիւր տեսակ ամբաստանութիւններ կարդում նրա գլխին բոլոր հայերը դողալով սպասում էին, թէ ո՞րտեղ որ է թոկը վիզը կը գցեն, որ խեղդեն, բայց Աբրամը իւր աննման հասակի հետ այնպէս ճարտար լեզու ու բարակ խելք ունէր, որ նրա տուած պատասխաններից յետոյ դատաւորներն ու գայմաղամն էին պարտական մնում նրան։

Երկու չաուշներ կային՝ Հաջի ու Սաֆար։ Հոտառ շների պէս էլ անարատ տուն ու անկիւն չէին թողել։ Բաւական չէր, որ գիւղում, գաւառակում աչքի տեսած ոչ եղն էին թողնում, ոչ պանիր, գիշերով կամ հանդիցն էին քշում կամ գոմի պատը ծակելով հանում, տանում, այլ և խրախուսուած հայի լուռ համբերութիւնից, սկսել էին դաշտ գնացող հարս ու աղջիկների վրայ յարձակուել, անպատիւ խօսքեր ասել։ Աբրամը դրանց արածները լսելով կատաղում էր, չէր իմանում ինչպէս անի, որ այդ չաուշներին առանձին պատահեցնի. աւելի չէ, միայն փանջի էջ կէս աչքի հաղլաղորէ, բաց թողնէ, որ Թարկը տան հային տանջելուց։ Բայց այդ չաուշները յարմար դէպքում նրա ձանկը չէին ընկնում, գիւղի մէջ հանդիպած ժամանակ կատակի ձևով մօտենում էին.

—Ա՛ գեավուր, քէֆդ ինչ է, հարցնում էր մէկը։

—Եալղուզգալի պէս կըլի, չես գիտում, պատասխանում էր Սաֆարն ու Հաջու հետ հրհռալէ ձին քշում Աբրամի մօտից փախչում։

—Գնացէք, գովրանը ձերն է, ասում էր ետևներից Աբրամը. թէ մի անգամ ձանկս կընկնէք, ես ձեզ «եալղուզգալութիւնը» *) ցոյց կը տամ։ Ո՛վ գիտէ էն ժամանակ աւելի թունդ անուն կպցնէք։

Բայց նրա հերսն ու կատաղութիւնը չափ չունէր, երբ լսեց թէ Մնոյի աղջիկ հացարփարդին շահնայի Սուլէյմանը առևանգել է գիշերը Սաֆարի ու Հաջու աջակցութեամբ, իսկ Դապոյի հարս Կաքաւին փախցրել են գայմաղամի որդու համար։ Ինքը վերկացաւ, գնաց Մուշ, բողոքեց գայմաղամին, ոչինչ արդիւնք չունեցաւ։ Աբրամը եկաւ այն մտքի, որ թուրքի, քրդի հետ դատաստանի մտնել հարկաւոր չէ, եթէ ույժ ունիս՝ խփիր, սպանիր, վերջը նա վախից քեզ հետ բարեկամ կը դառնայ։ Եւ սկսեց ինքը օրինակով ցոյց տալ թէ ինչ պէտք է պատժել կողոպտիչ ու կեղեքիչ քուրդ ու թուրքին։ Ոչ մինը նրանից սրի հաւրաւած չէր ընդունում. մատներն ունէր՝ երգանի ճիւղերի չափ երկար, բռնում էր ձեռները մէջ կծած բանջարի պէս հազղալումուլ փայտի կտորի նման դէն գցում։

*) Գայլութիւնը։

վերցնելով Փրկչի տուած. «Մերեցէք զմիմեանս» ս. պատուէրը։ Ս. պատարագից յետոյ՝ Ինքը Վեհափառը, գեր. եպիսկոպոսների, բարձր. վարդապետների և արժ. քահանաների հետ հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ Միքայէլ-Աղա Քարաուլեանցի հոգւոյ յիշատակին, որի անժառանգ տիկինը 100—125 հազար ռուբլու արժողութեամբ անշարժ կայքը կտակեց Վաղարշապատի վանական դպրոցի յարատեւութեանը, որ տիկնոջ անունով սանկր ուսանին։ Այս փառաւոր կտակի համար յարգելի տիկինն արժանացել է Վեհափառի ս. օրհնութեանը և վարձատրուել մի թանկագին մատանիով։

***

† «ՄԱՑԻՖ» ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՀԸ

—

Այս օրերս Լէնքօրանում վախճանուել է 75 ամեայ յարգուած ծերունի հայ ժողովրդական բանաստեղծ Յարութիւն Յովհաննիսեան Աղէքսանդրեանցը, որ յայտնի էր «Մալիֆ» կեղծ անունով (մալիֆ թուրքերէն նշանակում է կոյր)։ Հանգուցեալը ծնուել էր 1819 թուականին Պարսկաստանում Համադանի գաւառի Կարախանի խանութեան մէջ։ Դեռ մանկական հասակում նա զրկուեց ծնողներից և մնաց իր միակ մեծ եղբայր Գրիգորին ապաստան, որ ապրուստի միջոցներից զուրկ էր, որովհետև նրանց հայրը Աշըղ-Օհանը, որ նոյնպէս ժողովրդական երգիչ էր, հազիւ էր հայթայթում օրական ապրուստը։ Ծայրայեղ աղքատութիւնից ստիպուած հանգուցեալի մեծ եղբայր Գրիգորը ծառայ մտաւ տեղական Տէր-Ղազար Տէր-Աստուածատրեան քահանայի մօտ և այդ կերպով կերակրում էր իր կրտսեր եղբօրը։ 1835 թուին իրենց հարևան հայերի հետ միասին նրանք և գաղթեցին Շամախի, ուր տասնամեայ Յարութիւնն ապրում էր մշակութեամբ. ցերեկը նա տաշտակով ցեխ էր կրում նոր շինուող հայոց եկեղեցու պատերի համար, իսկ երեկոները դաս էր առնում նոյն եկեղեցու քահանայից։ Ծանր աշխատանքին չդիմացաւ նրա մատաղ կազմուածքը և նա կուրացաւ, ուստի էլ չկարողացաւ աւելի սովորել։ Այդ դժբախտութիւնից յետոյ նա դարձաւ մուրացկան-երգիչ, որ թափառում էր գիւղէ գիւղ, ածում էր սազը և երգում էր իր տխուր մեղեդիները, որ լսողների աչքերից արտասուք էին հոսեցնում։ Այսպէս նա ապրեց մի քանի տարի։ Այդ միջոցին նրա տաղանդը գրաւեց մի գեղեցկուհի հայ օրիորդի սիրտը, որի հետ և ամուսնացաւ Յարութիւնը։

Ամուսնութիւնից յետոյ նա փոխադրուեց Շամախուց Լէնքօրան, ուր և սկսեց առևտրով պարապել և շնորհիւ իր ընդունակութիւնների կարճ ժամանակում լաւ միջոցներ ձեռք բերեց և հարստացաւ։ Բայց հանգուցեալ Մալիֆի երջանիկ կեանքը երկար չտևեց իր գործակատարների անհաւատարմութեան պատճառով. նա կորցրեց իր կարողութիւնը և ընկաւ չքաւորութեան մէջ։

Մալիֆը բազմաթիւ բանաստեղծութիւններ ունի յօրինած։ Նա իր ոտանաւորները թելադրում էր հայերէն և թուրքերէն։ Այդ բանաստեղծութիւնների մի մասը լոյս է տեսել հայերէն առանձին գրքոյկներով, իսկ մեծ մասը մնում է անտիպ նրա մեծ որդու մօտ։ Ասում են, որ մի պարսկաստանցի հայ, որ ապրում է Արդաւիլում՝ այդ ձեռագրների համար առաջարկում է երեք հազար ռուբլի։

Մալիֆի գրուածները գեղեցիկ կերպով բնորոշում են նրան իբր մարդու և պօէտի։ Պօէտ Մալիֆի հասարակ մակերևոյթի անձնաւորութիւնը ճանաչելու համար պէտք է ուշադրութեամբ հետևել նրա գեղեցիկ գրուածներին, նրա ինքնուրոյնութեանը, որ դժբաղդաբար շատ հազուադէպ է մեր օրերում։ Մալիֆի կրած թշուառութիւնները նրա երգերին տուել են վշտի գոյն և նա երգում է հալածեալների, անտուն, անտէրների վիշտը։

***

Պետերբուրգից հեռագրում են.— «Թիֆլիզի քաղաքագլուխ պ. Իզմայլեանի հիւանդութեան կրիզիսը դեռ չէ անցել, հիւանդն իրեն թոյլ է զգում։

***

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, փետր. 28-ին.

(Թղթակցութիւն „Արձագանքի")

—

Ամսոյս 26-ին, կիրակէ օրը, Ամենապատիւ Տ. Տեղապահ Մեսրոպ սրբ. արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի հրամանով մասնաւոր վարդապետութեան իշխանութիւն տուաւ բարեշնորհ Թադէոս, Կարապետ, Բենիկ, Եղնիկ և Կոմիտաս աբեղաներին։ Նոյն օրը սարկաւագութեան աստիճան ստացան դպրեվանքի սաներ Մեսրոպ սրբ. արքեպիսկոպոսից Ռափայէլ Մելիք-Ադամեանը և Մուշեղ Տէր-Գաբրիէլեան դպիրները, որոնցից առաջինը ճեմարանաւարտ է և այժմ վերակացու է ճեմարանում, իսկ երկրորդը ճեմարանի երկրորդ լսարանի ուսանող է հիմա։ Այս հանդէսների առթիւ աչալին բազմութիւն էր խռնուած Վաղարշապատի Ս. կան եկեղեցում, ուր կատարուեցան այդ կարգերը.

Ժողովուրդն առանձին ուրախութեամբ հաւաքուել էր ներկայ լինելու իր սիրելի երիտասարդ հովիւների վարդապետական իշխանութիւն ստանալու հանդէսին. Նոյնից բար. Կարապետ, Կոմիտաս և Եղնիկ վարդապետները ամեն շաբաթ և կիրակէ երեկոները փոխ առ փոխ՝ մխիթարում են Վաղարշապատցոց իրանց հոգեշահ քարոզներով, որի մասին կարգադրութիւն էր արել դեռ բարեհանգուցեալն Ամենապատիւ Տ. Տեղապահը. Իսկ բար. Բենիկ վարդապետը, ինչպէս յայտնի է, մեր թեմի Ծխական դպրոցների տեսուչն է։

Յ.

***

ԴԵՕԿՉԱՅ, 2 մարտի.

(Թղթակցութիւն „Արձագանքի")

—

Հազիւ սկսեց մեզանում գարունը, և ահա երևան եկաւ մեր գաւառի առաջին գարնան կարապետը... առաջին աւազակախումբը։

Դուք արդէն գիտէք, թէ ինչ քաջագործութիւններ կատարեց Դեօկչայի, Շամախու և Ջևաթի գաւառներում անցեալ տարուայ հռչակաւոր աւազակախումբը։ Այդ խմբից դեռ կենդանի են առաջին պարագլուխ Թալիբը, արիւնածարաւ Արզուլ Սամէդը, որի գլխաւոր պաշտօնն էր՝ թալանելուց յետոյ սպանել նրանց, որոնք կարող կը լինին որ և է վկայութիւն տալ, և հռչակաւոր Նշան խփող Նեֆտալին.

Սակայն դրանք դեռ ձմեռում են և վեր չեն կացել. սպասում են օրերը տաքանալուն, որ թռչուռեն.

Բայց ահա Դեօգչայի գաւառի հիւսիս արևելեան կողմում կազմուել է մի նոր հետիոտն աւազակախումբ, որ վերջին տասն օրուայ ընթացքում միայն Քիւրդամիրի գաւառաբաժնում չորս եղեռնագործութիւն կատարեց մէկը միւսից ծանր և կատարեալ անպատիժ մնաց. Ահա այդ եղեռնագործութիւնները ժամանակագրական հերթով.

1. Փետրվարի 21-ի գիշերը խումբը թալանեց Կուրտ գիւղի բնակիչ Քերբալայ Եղայ Հասան օղլու տունը և աւար տարաւ մօտ 300 ռուբ. փող և իրեղէն.

2. Փետրվարի 26-ի գիշերը թալանեց Ըփաուտ Մարդան բէկ գիւղի բնակիչ եղբ. Սուլէյման և Մաշադի Թարվերդի Ալի Օղլիները տունը և աւար տարաւ մօտ 150 ռուբ. փող և իրեղէն.

3. Փետրվարի 27-ի գիշերը նոյն խումբը պաշարելով Կուրտ գիւղի Արդալ անունով գիւղաբաժինը (отселокъ), թալանեց երկու տուն, Մաշադի Բաղլ Դիւանաշ օղլու և Մաշադի Միրի Մելիք օղլու. Առաջինի տնից թալանեց խումբը մօտ 200 ր. փող և իրեղէն. Միևնոյն ժամանակ ծանր վիրաւորուած են բերդանի հրացանների գնդակներով Մաշ. Բասուլի կին Մարալը, նորա 7 տարեկան Թուփի աղջիկը, չորս տարեկան Մեջլիդ որդին, մի տարեկան Զարնիշան աղջիկը և 8 տարեկան Նիշ անունով ազգականը. Դորանցից Մեջլիդի և Նիշի կեանքին վտանգ է սպառնում. հազիւ թէ նորա ապրեն.

Մաշադի Միրու տնից թալանել են մօտ 150 ր. փող և իրեղէն.

4. Փետրվարի 28-ի գիշերը նոյն աւազակախումբը թալանեց Նեմլի գիւղի բնակիչ Մաշադի Ջաֆար Կասիր օղլու տունը. իրեն Մաշադի Ջաֆարին սպանեցին և մօտ 800 ռուբ. փող և իրեղէն տարան.

Առայժմս յայտնի է, որ այդ խումբը բաղկացած է հինգ անդամից և, ինչ ասել կ'ուզէ, որ հիանալի զինուորուած է արագաձիգ հրացաններով.

Պէտք է, սակայն խոստովանել, որ իրենք թուրքերը մեղաւոր են, որ աւազակներին ձեռբակալելը մեծամեծ դժուարութիւնների է հանդիպում. Նորանք ոչ միայն չեն օգնում ոստիկանութեանը, այլ պատսպարելով և թաքցնելով աւազակներին՝ մեծամեծ դժուարութիւններ առիթ են տալիս.

Օրինակ Կուրտ գիւղը յայտնի է իր աւազակապարոյ յատկութեամբ. Նոյն իսկ կուրտցի Մաշադի Բասուլի մասին, որի ամբողջ ընտանիքը բացի երկրորդ կնոջից այսօր չարաչար վիրաւորուած է, հաստատում են, թէ միշտ ապաստան է տուել իր ազգական Հիտայեաթ, Նամաթ և Նդամալու աւազակներին.

Այդ գիւղը պատժելու համար կառավարութիւնը իր կողմից տանուտէր նշանակեց և ընտրեալ տանուտէր ունենալու իրաւունքից զրկեց. Սակայն նշանակած տանուտէրը մի ծեր և ողորմելի մարդ է և մի այդպիսի գիւղ կառավարելու բոլորովին անընդունակ. Ուստի միանգամայն անհասկանալի է, թէ ինչպէս մի այդպիսի թեկնածու աջողութիւն ունեցաւ. Մինչդեռ գիւղը նորան և նորա մի չափաւորին վճարում է ամսական 40 ռուբլի և մատակարարում ամեն բան թէ նրանց և թէ նորանց ձիերին.

Աւազակապարոյ գիւղերին պատժել մեծամեծ տուգանքներով դա միակ միջոց է ընկճելու նրանց աւազակապարոյսութիւնը. Սակայն աւելի լաւ չէր լինի այդ տուգանքը ծառայեցնել գիւղի հանգիստ տարրի ապահովութեան. Կուրտի երկու անգրերն էլ եղել են երեկոյեան ժամը 7-ին կամ ութին. իսկ տանուտէրը ոչ հալածել է աւազակներին և ոչ էլ տանից դուրս մի կարգադրութիւն է արել. Եղն ինչ բանի չեն ձիաւորուել աւազակները, բանի ցուրտ է, անչբան աւելի հեշտ է խմբի ոչնչացնելը.

Յետոյ ուշ կը լինի.

Ի. Ն. Է. Ն.

***

ԲԱԳՈՒԻ քաղաքային խորհրդի միջնորդութեան համաձայն Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն ներկայացրել էր լուսաւորութեան նախարարին Բագւում արական գիմնազիա բանալու ծրագիրը։ Այդ գիմնազիայի բացման խնդիրը յարուցուել է դեռ 1886 թուին. բայց որովհետև այն ժամանակ գանձարանի միջոցները նեղ էին, չյաջողուեց քաղաքի ցանկութիւնը կատարել։ Գիմնազիայի ծախքերի մի մասը պէտք է յատկացնել քաղաքի միջոցներից, մի մասը գիմնազիայի յատուկ միջոցներից և մնացեալը գանձարանից։ Քաղաքը բացի նրանից որ յատկացնում է տարեկան 8668 ռուբլի, նաև տալիս է պատրաստ բնակարան, ինչպէս վճռել է քաղաքային վարչութիւնը. բացի դրանից պահանջում է որ գանձարանը տարեկան 10,000 ռուբլի յատկացնէ։ Գիմնազիան ենթադրում են բանալ ներկայ տարուան սեպտեմբերի 1-ից. առաջին անգամ կը բացուին առաջին 5 դասատներ և ապա իւրաքանչիւր տարի մի մի դասատուն կաւելանայ, մինչև 8-երորդը։

***

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հաղորդում են որ բարձրագոյն հրամանով թոյլ է տրուած պետական գանձարանին՝ յատկացնել Թիֆլիսի [illegible] կրկին 132,345 ռուբլի, բացի անցեալ տարուան յատկացրած 100,000 ռուբլուց։

***

«Իվէրիա» լրագիրը հաղորդում է թէ Բորժոմում ձերբակալուել է մի ոմն Ն. Մուրատով, որի մօտ գտել են 18 հատ [illegible]։ Մուրատովը մինչև Բորժոմ գալը այդպիսի կեղծ դրամներ տարածել է շրջակայ գիւղերի գիւղացիների մէջ։

***

Ճանապարհների հաղորդակցութեան նախարարութիւնը հրատարակել է հետաքրքրական տեղեկութիւններ [illegible] այժմեան դրութեան մասին։ Նախարարութեան հսկողութեան տակ բացուած երկաթուղիների երկարութիւնն է 31,241 վերստ. դրանցից 20126 վերստ արքունական է, իսկ 11,115 վերստ մասնաւոր։ Ֆինլանդական նախարարութեան հսկողութեան տակ գտնվում է 1343 վերստ, Ֆինլանդիայում 2108. իսկ ընդամենը կայսրութեան մէջ բացուած է 34,692 վերստ։ 1894—95 թուին նորից բացուած է 1800 վերստ, մասնաւոր ընկերութիւններից անցել է գանձարանին 7582 վերստ. գանձարանը նորից շինում է 4241 վերստ, թոյլ է տուած շինել 96 վերստ. ուրեմն ընդամենը 4337. մասնաւոր ընկերութիւնները շինում են 1992 վերստ և թոյլ է տուած շինել 3339 վերստ, ուրեմն ընդամենը շինվում է 7677 վերստ։ Նոր շինուող երկաթուղիների գծերի վրայ ժամանակաւոր երթևեկութիւն է սկսուած 1638 վերստ տարածութեամբ։

***

Չորեքշաբթի Թիֆլիզի արքունական թատրոնում կը կայանայ Թիֆլիզի արտիստների նոր ընկերութեան առաջին օպերային ներկայացումն։ Կը ներկայացնեն «Ֆաուստ օպերան»։ Ֆաուստը կերգէ պ. Վարդիկեանը։

***

Ներքին գործոց նախարարութիւնը հաստատել է Թիֆլիսում բացուելիք [illegible] կանոնադրութիւնը։ Հիւանդանոց-բուժարանը բանում են Կարպենչինկօ, Մարկոսեանց և այլ բժիշկները։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԻՆ, փետրվար. 7

(Թղթակցութիւն "Արձագանքի")

—

Այս տարի համեմատելով միւս տարիների հետ, համարեա ձմեռ չտեսինք։ Եղանակն դգալի կերպով բարեխառն և սխորժաբոյր անցաւ։ Շնորհիւ եղանակի այս մեղմութեանը մթերքների թանգութիւնը ևս համարեա չտեսինք այնքան։ Ամեն՝ ինչ որ հրապարակի վրայ ի վաճառ կը դնուէր, սովորականէն աժան էր։

Սակայն քօլերան, որի նշոյլն անգամ ցարդ գոյութիւն չունի, յանկարծուստ, այն ևս ձմեռուայ այս եղանակին, «տեղծուեց» և քաղաքի համարեա բոլոր անցքերն ու մուտքերը կարանթինայի տակ առաւ։

Կարանթինա՜յ. . . ահա մի սոսկալի երևակայական գնդան, մի դըժոխք, որ պատրաստուած է բոլոր ուղևորների համար։ Նա՝ հակառակ իր կոչման՝ կարող է ամենաառողջները մահացնել, ինչպէս որ նախկին տարիներում (1892—93) տասնեակ անձերի մահուան պատճառ դարձաւ։ Նա կարող է տեղն ու տեղ չորացնել, ցամաքացնել առևտրական ու վաճառականական բոլոր աղբերակներ, ինչպէս այդ տեղի ունեցաւ նոյն թուականների մէջ բազմաթիւ վաճառականների վերաբերմամբ։

Կարանթինան, որին՝ նախկին տարիներում 18 ժամուայ ճանապարհորդութեան ընթացքում՝ 3 անգամ ենթարկուելու դժբաղդութիւն ունեցայ, չունի իր սրսկիչ դեղ, և ոչ ևս առողջապահական մի նշան։ Իւրաքանչիւր ամայաբնակ վայրերում, ուր առնուազն լցուած էին մօտակայ վայ-

---

Գայմագամն սպասում էր որ մի անգամ էլ Աբրամը գանգատաբան ունենայ իր մօտ, չէր լինում. ոչ ով նրա մազին չէր դիպչում. Հաջին ու Սաֆարը ասին՝

—«Հապա մենք կը գնանք, նրա տաւարը կը քշենք, տեսնենք սուս կը մնայ, թէ կը գայ ուրիշների պէս լաց կը լինի որ տաւարը ետ տան».

—Եթէ այդպէս մի բան անէք, պատասխանել էր շահնան, ես ձեզ հնգական ոսկի ընծայ կը տամ։ Աբրամը հըպարտ է. սեպհական կորուստի համար գայմագամի մօտ գանգատ գնացողը չի։ Դնա էլ, օգուտ չի տեսնելու։ Գլուխը քարը, հօ աղբանը կը կորչի։

—Մեր աչքի վրայ՝ ասել էր Հաջին, միւս հայերի նման գնավուր Աբրամին էլ գատարկելն ու մազին հակը շինելը։

—Համա զգոյշ կացէք, տղերք, խորհուրդ էր տուել շահնան, «եայղուզազ» է, չբրբրի ձեզ։

—Մենք էլ պակաս ղոչում չենք չենք, միամիտ կաց, վրայ էր բերել Հաջին. բանը որ տեղն ընկնի, մենք նրա մօրթին կը բերենք մէյդան ծախելու։

—

Այս խօսակցութիւնը ամառնամտին էր եղել։ Աբրամը իբրև ռաչպար, երկրագործ մարդ իր որդու հետ գնացած է լինում հանդը խուրձ կրելու։ Ջոկ-ջոկ սայլ ունէին, ու գաշտում իրարից հեռու բարձում էին բարդակները։ Յանկարծ որդու սայլի մօտ լոյս են ընկնում Սաֆարն ու Հաջին. գոմէշներն արձակում են ու քշում։ Որդին ձայն չի հանում, վախենալով նրանց սրերից, այլ շտապով հասնում է հօր մօտ։

—Հայր, ասում է, թուրքերը գոմէշներն ուժով արձակեցին, տարան։

Աբրամը բարձելը վերջացնում էր, խէթեց աչքերը որդու վրայ և հարցրեց։

—Հապա դու որտեղ էիր, որ արձակեցին։

—Սայլի մօտ։

—Քանի հոգի էին։

—Երկու։

—Յետոյ ինչու թողիր, որ արձակեն։

—Ինչ անէի, հայր, ինչ ընդդիմանայի, նրանք զէնք ունէին, ես մի դատարկ եղան։

Աբրամը ատամները կրճտեց որդու անշնորհքութեան վրայ, առանց խօսք ասելու իր սայլը քշեց, բերեց միւս սայլի մօտ ու դարձաւ որդուն հարցըրեց.

—Անսիրտ տղայ, գոնէ ճանաչեցիր, ովքեր էին գոմէշներ տանողները։

—Հաջու և Սաֆարի պէս զոռով մարդիկ էին. լաւ չճանաչեցի, հայր, բայց այսպէս քշեցին տարան։

Մատով ցոյց տուեց ուղղութիւնը։

—Անշնորհք ու անսիրտ որդի, գոռ-նացած խօսեց Աբրամը, դու մարդ չես դառնալ, շուտ արա թափիր սայլդ խուրձը։

Յանդիմանութիւնից կարմրատակած որդին գլուխը բարձրացրեց կողքանց ու ասեց.

—Ինչու թափեմ, հայր. Աստուած է վկայ, լաւ է բարձած, մինչև կալը մի հասկ չի ընկնի։

—Քեզ ասում եմ, սայլը թափիր, լսում ես. էլ ոչ մի խօսք, չուանները արձակիր։ Ես գնում եմ շուտ կը գամ։

Այս ասելով վերցրեց իր սովորական մահակը—գոմշաքշին ու վազեց դէպի ձախ։ Բաւական վազելուց յետոյ նկատեց որ հեռւում երկու մարդ գոմէշները քշելով տանում են։ Աւելի վազեց. և քիչ մնաց հասուէհաս լինի։ Ձայն չէր հանում, լռիկ ու մնջիկ մօտենում էր, բայց նրա թափից ոտնաձայնը թուրքերի ականջին հասաւ։ Հաջին ետ նայելով որ չտեսաւ Աբրամին ահագին գոմշաքշին ուսին դրած վազելիս, սարսափը ջանն առաւ։

—Սաֆար, ինչ անենք, գնավուրը գալիս է, բայց կատաղածի նման է գալիս. ինչ ճար կ'ասես, կռուենք թէ փախչենք։

Սաֆարը որ թուրը հանած՝ ծայրով բզում էր գոմէշներին, որ արագ ընթանան, նոյնպէս շփոթուեց, երբ ուսով յետ նայեց ու «եայղուզազ» Աբրամին տեսաւ։

—Ամենից լաւն այն է, իրա ապրանքը թողնենք, մենք փախչենք. եթէ այս անգամ չյաջողուեց, ցաւ չէ, միւս անգամ ոչխարի ամբողջ հօտը կը քշենք։

Այսպէս խորհրդակցելով Հաջին ու Սաֆարը գոմէշները թողին ու իրանք մի կողմի վրայ փախչել սկսան։

Այն ժամին Աբրամը, ետևներից սրտագոռ գոռաց.—Այդ ուր էք գնում, վախկոտ շներ. փախչելու հնար չունիք. կանգնեցէք, որ ձեզ սաղ թողնեմ, թէ չէ կը սատկացնեմ։

Նրա բղաւոցը այնպէս ուժեղ ու ցասկոտ էր, որ թափանցեց թուրքերի սրտերի խորքը, ու ահով լցրեց մազի ծայրից մինչև ոտի պճեղը։ Էլ չկարացին տեղներից նալ. մնացին փայտի պէս կանգնած։

Հասաւ թուրքերին ու հինգ քայլ հեռու գոմշաքշին բարձրացնելով գոռաց ահեղաստտ.

—Թափէք սրերը։

Թափեցին սրերը։

—Հանէք պատեանները։

Դողդոջուն ձեռքերով հանեցին պատեանները գօտիկներից։ Սրերը պատեանների մէջ դնելուց յետոյ, Աբրամը մի հարուած հասցրեց Հաջուն և ասաց.

—Արձակիր գոտիդ։

Էլ որտեղ արձակէր, հազիւ ուսը բռնեց ու սկսեց մղկըտոցից թեյլէկ մեյլէկ գալ։

Աբրամը մօտեցաւ, գոտիով Հաջու կռները մէջքին կապեց։ Դարձաւ Սաֆարին խփելու, նա պաղատելով գոտին Աբրամի առաջը գցեց որ իր կռները ինքս ուզէ կապէ։ Նրա կռներն էլ ամուր կապելուց յետոյ Աբրամը ասեց.

—Դէ, առաջ ընկէք, գնանք այն սայլի մօտ, որ թողել էք արտում։

Թուրքերի ճարն ինչ էր որ չգնային։ Աբրամը գոմէշներին քշում էր, հետն էլ թուրքերին, առանց նայելու թէ փայտը կողքներին է դիպչում, թէ մէջքներին։ Թուրքերը մահակի հարուածից ազատուելու համար մէկ այն գոմշի շուքն էին մտնում, մէկ այն։ Աբրամը լուռ էր. թուրքերը այդ լռութիւնից էին հենց սարսափում և հազար պատուհաս մտքներով անցկացնում։

Հասան արտը. Որդին հօրը պատուէրը ակամայ կատարել, մնացել էր դատարկ սայլի մօտ կանգնած սպասելիս։ Զարմացաւ որ տեսաւ գոմէշների արանքում կապկապած գալիս են իրանց գիւղի կործանիչ թուրքերը։

Ուրախ ուրախ մօտեցաւ հօրը և անհամարձակ հարցրեց.

—Հայր, այսօրուայ քո արարմունքները ինձ զարմացնում են. եթէ դու գողերին պէտք է բռնէիր, գլխաթափ արած հետդ պտտացնէիր, էլ ինչու համար էիր բարձած սայլը դատարկել տալիս. Բարձած պատրաստ կը լինէր, հիմի կը լծէինք, կը գնայինք, գող թուրքերին էլ գայմագամին կը ներկայացնէինք։

Հայրն արհամարհական հայեացք ձըգելով որդու վրայ խօսեց.

—Եթէ շարունակես այդպէս մտածելը Մուշի դաշտայում, էլի մարդ չես դառնալ։

—Ես ինչ կը դառնամ, միամտաբար հարցրեց որդին։

—Կը դառնաս մեր գոմէշի ընկերը. կըգայ յաւուշ Սաֆարը, լծան տակից կը հանի ու կը տանի քեզ. Ոչ կը տըրլնգաս, ոչ ձայն կը հանես. քեզ համար միևնոյն կը լինի, թէ ով կը տանի, կամ ուր կը տանի։

—Հիմի ինչ կասես, հայր, սայլը չըբարձենք։

—Ինչու համար, հարցրեց Աբրամը։

—Հապա էդ մարդկերանց տանելու չես գայմագամի կուշտը։

—Ինձ ինչ են արել, որ դատաստանի դուռը տանեմ, ես շուտով արձակելու եմ սրանց, դու շտապիր քո սայլի տակից ակները հանիր։

Որդին այս անգամ բոլորովին մնաց ապշած. Ինքը առաջարկում էր հօրը, որ թափած խուրձը բարձեն՝ դեռ չմթնած կալը հասցնեն, հայրը այժմ հրամայում է որ սայլը սարքաջան անեն, ակները տակից հանեն։

—Հայր իմ, չեմ հասկանում, ինչ ես ուզում անել, ախր օրը մթ...

Մինչև որդին կմկմոցը կ'աւարտէր, Աբրամը ճուաց.

—Քեզ ինչ որ հրամայում եմ, իսկոյն արա, երբ ճնճղուկի չափ գատելու, հասկանալու շնորհք չունիս։

Այս ասելով որդու ուսից բռնած այնպէս հրեց, որ սայլի ճաղերի վրայ ընկաւ։

Թուրքերը գոմէշների արանքից դուրս չէին գալիս։

Որդին կատարեց հօր պատուէրը, կարծելով թէ ակների կամ սռնու վրայ կոտրած տեղ կայ, հայրը նկատել է, պէտք է կարկատէ. Աբրամը խրձան թոկը երկու տակ անելով գցեց սռնու մէջտեղը. յետոյ թոկի ծայրերից մինը կապեց Հաջու գոտկատեղից, միւսը Սաֆարի. Նրանք սփրթնեցին ու մնացին անխօս, մտքներում դոհ մնալով Աբրամից, որ այնքան բարեսիրտ էր, բարձած սայլի վրայ չընեց։

Այժմ Աբրամը, նրանց կայծիքով իրանց այնքան խղճաց, որ դատարկ սայլի տունն անգամ վերցրեց, թեթև ակների վրայ լծեց, որոնց քաշ տալը այնքան էլ դժուար չէր։

—Մի քիչ տեղ Աբրամը սռնու վրայ կը նստի, մտածում էին թուրքերը, մի մի փայտ կը հասցնի ու իրիկունը կ'արձակի մեզ մեր տները։

Բայց Աբրամը աչքերը խոժոռելով թուրքերի վրայ գոռաց.

—Դուք որ շատ հայերի ձի էք շինել, վրէն նստել. շատ հօտաղի ու մաճկալի եզների տեղ լծան տակ քաշել. մարագ ու դէզ կրակի բերան տուել, ձեր քէֆի ու կրքի համար անհամար աղջիկ ու հարս անպատուել, ամօթահար արել. հապա քաշեցէք ակները դէպի առաջներիդ սարը, տեսնենք շնորհք ունէ՞ք։

Թուրքերի դողը բռնեց. մինչև առաջների սարը...այդ խօ հոգիները դուրս կը գար. Մնացել էին կանգնած. Հենց այն է, ուզում էին բերանները բանան երևի տրտունջ անեն կամ ընդդիմանան, գոմշի փայտը (ճիպոտ) թուրքերի մէջքով պատ ընկաւ և տրաքոցի ձէնը երկինք բարձրացաւ։

ըներից հաւաքուող 25–300 անձինքներ, անդեղ-անդուր, անհաց, անվառելափայտ, անանկողին կը պահուէին մի փոքրին սառնաշունչ խարխուլ ու խոնաւ բնակարանի մէջ 6—12 օր։ Ամեն ծախսը, ինչ որ անհրաժեշտ է առօրեայ կեանքին, կը կատարուէին պաշտնեաների կողմից՝ այն և ոստիկանների, կամ տեղային բարբառով, [illegible] միջոցաւ։ Իւրաքանչիւր անհատը կը պարտէր՝ որպէս պաշտնեական ծախս հատուցանել 45 գրուշ ընթացիկ դրամ, անասունին՝ 3 գրուշ, իսկ բեռներին կամ կապոցներին՝ 2½ գրուշ։ Անկարները շղթայուած կ'ուղարկուէին վիլայէթի կենդրոնական բանտ, ուր պիտի մնային բանտարկուած մինչ ցհատուցումն. իսկ կարաւանն ու իւր ապրանքը՝ մինչեւ ի վճարումը՝ կ'առնուէին հսկողութեան ու արգելման ներքոյ։ Եւ այս դէպքում կը յարմարէր նշանաբանել գաւը գայլին յանձնելու առածը։

Կարանթինային վերաբերեալ ընդհանուր դեղ, որ յանուն պաշտնեան կը գործածուէր շաբաթուայ ընթացքում մի անգամ, մի պղղինձ խունկ էր, որ կը ծխուէր այն տասնեակ անձինքների գումարի մէջ, որոնք իրանց կողք կողքին թափթփուածներով՝ ոչխարների մլոցների նմանութիւն կը բերէին։ Ահա Բարձր Հայոց և նորա մերձակայ վայրերում գտնուող պաշտնեաների լոկ բատուերը։

Կառավարութիւնը՝ կարանթինական գործին աւելի մեծ ծաւալ տալու համար՝ յանուն տեղւոյս անտառների պահպանութեան աւելացրեց նոր 26 պաշտօնեաներ եւս։ Սոցա պաշտօն, անտարակոյս, այն պիտի լինի, որ փակեն ճանապարհորդութեան բոլոր միջոցներ։ Սոցա ամենքին, որոնք մի մի յօշոտող գազանի ու վարազի նմանութիւն ունին իրանց յատուկ բնաւորութեամբ, կառավարութիւնից լիազօր իրաւունք է տրուած, որ իւրաքանչիւր պատահող հայ անցորդին, թէկուզ նա լինի մերձակայ գիւղօրէից բնակիչ, ենթարկել մանրակրկիտ խուզարկութեան և ապա խիստ հսկողութեամբ յանձնել պաշտնեական վարչութեան։ 26 նոր կարգեալ պաշտօնեաների աւելումն արդէն ազդարարուած է մի պաշտօնական ցեկուցագրով։

Բացի այս կարգադրութիւններից տեղւոյս իշխանութիւնը, որ յատուկ մի հայելի է բարձրագոյն կարգադրութեանց, անցեալները մի քանի գործեր կատարելու քաջութիւն ունեցաւ, թէ ինչ գիտաւորեալ միտք ունէր այդ նոր կատարելիք գործերը, անշուշտ գլուխ ամեն մի տաճկահայ և կամ թուրքական վարչութեան ի մօտոյ ծանօթ անձնաւորութիւնք։։

Ս. Լուսաւորչի վանուց տօնը, որի հանդիսաւոր տօնակատարութիւնը վերջին քանի տարիներս խանգարուած էր իշխանութեան կարգադրութեամբ, այս տարի բոլորովին անսպասելի կերպով անցաւ բաւական փառաւոր շքով։ Քաղաքիս երիտասարդ ու հասակաւոր պճնեալ ու զուգեալ խրամներով ծածկուած ու բռնուած էր Լուսաւորչու ճանապարհն ու բլուրը։ Ամենուրեք կանանց ու մարդկանց խառնուրդ խմբերով էր զարդարուած։ Լուսաւորչու վանքը կը գտնուի քաղաքից դուրս քիչ հեռաւորութեան վրայ և մի հինաւուրց հիմնարկութիւն է։ Հանդիսաւորները թէև շրջապատուած էին տասնեակ «փօլիսներով» և որոնք կը կառավարուէին յայտնի «փօլիս Մուրատի» իշխանութեամբ, սակայն անսպասելի կերպով խաղաղ և անվտահարնելի անցուցին իրանց տօնը։ Պատրանք...

Եւրոպական մի թերթի յայտնի թղթակից Դիլօն այժմ ծանրապէս հիւանդ պառկած է տեղւոյս մի միսիօների տան։

Կ ցի

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹ», ժողովրդական ընթերցանութեան համար, Խմմանուէլ քահ. Նազարեանցի։

«Il n y a pas de types tranchés, tout est mixte dans nos jours» — (Չկան բնորոշ, սուր տիպարներ, ամեն ինչ խառնուրդի մի գանգուած է մեր օրերում) ասում է ֆիզօլօգ-ֆիզիօնոմիստ Լըդօ (Ledos Mistères de physiognomie)։ Ինչու. ահա ինչու։

Մարդկութիւնը մանրացել, պլասեռել է։ Ի՞նչպէս կարող է երեսը, դէմքը, ներքին աշխարհի այդ հայելին, պահպանել սուր, ազդու գծեր, երբ չկան այլ եւս սուր, ազդու մեծ բնաւորութիւններ, անընկճելի կամքի, անդրդուելի հաւատի տէր, մեծ իդէալների ծառայող, մինչեւ իսկ մեծ, անսանձ կրքերի տէր մարդիկ։

Դրուած, բարոյական մեծ իդէալներին ծառայելը անախրոնիզմ, նոյն իսկ ծաղրի առարկայ է դարձել։ Կասկածի և հետախուզութեան (analyse) ոգին մարդոց միանգամայն մի կողմն է քաշել։ Ժամանակակից մարդոց մէջ զարգանում է միմիայն մի կողմը — մտաւորը։ Սիրտն ու հոգին բարձի թողի են արուած։

Հետախուզութիւնը, գիտութիւնը, անալիզը, ինչ ասել կուզի, անհրաժեշտ են մարդկութեան յառաջադիմութեան և բարօրութեան համար։ Բայց և անժխտելի է, որ լոկ դոքա բաւական չեն մարդուն «[illegible]», [illegible] դարձնելու համար։ Քանի որ մարդը Zoon polyticon է, ինքն ըստ ինքեան հասկանալի և անհրաժեշտ է, որ «այր զընկեր սիրէ», իսկ այդ ընկերի, մերձաւորի սէրը ձեռք է բերվում միմիայն բարոյական դաստիարակութեամբ, այսինքն՝ աշխատելով մարդոյ մէջ, ի հարկէ, ինչպէս ասում են՝ ձուից սկսած, մեղմացնել, եթէ հնար է միանգամայն խեղդել մարդոյ չար հակումները, ամոքել բիրտ և բարբարոս բարքերը, ներողամիտ, համբերող ու արդարադատ դարձնել նրան։ Պէտք է բարոյապէս պատրաստել մարդուն։ Չէ որ ծառերն ու բոյսերն էլ խնամելով ազնուացնում են։ Ո՞վ է քաղել «փշից խաղող, կամ «տատասկից թուզ»։

Հիմա տեսնենք թէ ինչ զէնքեր ունենք չարը միջից բառնալու, բարին սերմանելու։ Գլխաւորապէս երկու, որոնք ի հարկէ մէկը միւսին լրացնում են. բարեբարոյ կենդանի և ազդու խօսք։ Քաղաքակրթութեան մեծ կենդրոններում, բազմամարդ, զարգացած քաղաքներում, որ և է բարձր գաղափարներ քարոզողի անձնական կենդանի այլ եւս անհրաժեշտ պայմանի (conditio sine qua non) շրջանից դուրս է ելել։ Այնտեղ գրողը մասնաւոր կեանքին մի առանձին նշանակութիւն տուող էլ չկայ։ Սակայն այնտեղ խօսքը, գրուածքը ահագին կշիռ ունի, սաբեր է գլորում, փոթորիկներ է յառաջ բերում։ Մինչդեռ փոքրիկ ու կիսակիրթ հասարակութեանց մէջ այդ հրաշքները գործելու համար՝ [illegible] հետ զուգընթաց և [illegible] ու անբասիր բարք ու վարք է պէտք։ Բայց այնտեղ եւս խօսքը, գրուածքը շա՜տ մեծ, շա՜տ բարեբար հետեւանքներ կարող են բերել։ Բեմից կամ ամբիոնից հնչող կենդանի խօսքն անշուշտ աւելի կարող է շարժել, ցնցել մարդուն։ Բայց և փոքր չէ գրուածքի արած ծառայութիւնը։

Սակայն գրելն էլ «թան չէ, ամեն մարդու ուտելու բան չէ»։ Գրուածքը հանրացնելու, ամենքին մատչելի անելու համար, գիւրըմբռնելի բանաձեւ պէտք է։ Ինչպէս ուրիշ տեղ ասել ենք, ժողովրդի այդ հազարգլխեան մարմնի հետ, իւր լեզուով պիտի խօսել։ Կրօնական բարոյական փիլիսոփայութիւնը, որ անշուշտ մարդկութեան զարգացման ամենամեծ խթանն է եղել, իւր շատ անգամ հակիրճ, ամփոփ ու վերացական բանաձեւով, սառած ու մեռած մի բան կը լինէր, եթէ չլինէին մի շարք մարդիկ, որոնք այդ սառոյցը հալեցնելով, սակաւ ընտրեալների վայելածը, ջերմացնելով ու փափկացնելով ամենքի բաժին են դարձնում։

Անշուշտ Աւետարանը Կանտի Kritik der reinen Vernunft-ի նման տասնական մարդու համար «եօթն կնքով կնքած» գիրք չէ։ Նա ամենքի համար պարզ է ու հասկանալի։ Սակայն և նորա բովանդակութիւնն աւելի լուսաբանելը, նորա երկնաւոր հիմնադրի երկրաւոր կեանքի խորհրդաւոր մոմենտները ամբոխին իւր պարզ ու անպաճոյճ լեզուով մասնակից անելը անգնահատելի մեծ արժանիքն է այն անձանց, որոց «ի վերուստ տուեալ են շնորհք»։

Խմմանուէլ քահանայ Նազարեանի՝ տասնեակ տարիներ առաջ հրատարակութեան օրով գրած «Յիսուս Քրիստոսի Ծնունդը և Մկրտութիւնը» մակագրով փոքրիկ գրքոյկի մասին մենք իւր ժամանակին խօսել ենք «Արձագանքի» էջերում («Արձագանք» 1892 № 146)։ Այժմ մեր առջեւն է գրուած նորա մի այլ գողտրիկ աշխատութիւնը, որի մակագրութիւնն է յօդուածիս վերնագիրը։

Գրքոյկը իբրեւ նիւթ է առել այն վեհախորհուրդ օրերի նկարագրութիւնը, երբ երկրագնդիս մի խուլ անկիւնում Միջերկրական ծովի արեւելեան եզրին գտնուող երկրի մի նեղ շերտի վրայ, անցքեր էին կատարվում, որոնք մարդկութիւնը հաստատագոյն հիմքերի վրայ դնելու շէնքի հիմքերն էին կռում։ Այդ այն օրերն էին, երբ հին աշխարհի փտած շէնքը միանգամայն խարխլել էր, երբ փարթամութեան, գինովութեան մէջ ընկղմած Հռոմ, և նորա հետ միասին նորա խմորով խմորուած աշխարհը, անհոգ շարունակում էին գանդաղաբար քայքայուել, առանց երազումն անգամ երեւակայելու, թէ Հրէաստանի Գալիլեայից մի բուռն մարդիկ պիտի դուրս գան, որոնք շատ փոքր միջոցում, իրենց Մեծ Նահատակ-Վարդապետի գաղափարով ու հոգւով զինուած, վերջ պիտի դընէին այդ վիթխարի Լեւոնեան Հիդրային, որ ամեն ինչ կլանում էր։

Այդ այն մարդկութեան պատմութեան մէջ, եզակի եօթնեակն էր, երբ մարդկութեան Փրկչի գլխով փոխ առ փոխ անցնում էին նորա երկրաւոր կեանքի ամենախորհրդաւոր ու հակասական անցքերը, անցքեր, որոնք վերջը աշխարհի անիւը պիտի դարձնէին։

Այդ այն օրերն էին, երբ՝ կիւրակէ օրը աւանակի վրայ հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մուտք գործող Մեսիան, հինգ օր չանցած, նոյն ովսաննան կոչող ամբոխի ու մոլեռանդ փարիսեցիների ու դպիրների ձեռքով խաչ հանուեցաւ, թաղուեցաւ, իսկ եօթներորդ օրն արդէն յարութիւն առաւ, իւր հետ յարութիւն տալու, վեր բարձրացնելու համար ընկած, մեղքում գլորուած ու կորած մարդկութիւնը...։ Ահա նիւթեր որ միշտ ու անդադար, կենդանի խօսքով ու գրուածքով, պէտք է յիշեցնել ժողովրդին, իւրաքանչիւր անհատին, որպէս զի նա իւր լոկ նիւթական ու եսական գործերով չմոռանայ, անկենդան և անպիտան կմախքը չը դառնայ։ Մերձաւորին, մինչեւ իսկ թշնամուն սիրելու պատուիրանը մտքից չը հանէ, և միշտ իրեն զգայ իբրեւ մի անդամը մարդկութեան մեծ ընտանիքի, որի ամբողջութիւնը պահպանելն է իրեն միակ կոչումը։

Ահա այս է և հայր Խմմանուէլի գրքոյկի նպատակը, մի գրքոյկ որ անհրաժեշտ պիտոյքներից մէկը պիտի լինի ամենքի համար, մանաւանդ որ գինն էլ չնչին ու յետին աղքատին անգամ մատչելի է։

Յ. Լ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

ՄԻՔ ԱՐԱՄԵԱՆԻ ԿՆՈՋԸ՝ ՏԻԿ. ԵՂԻՍԲԷԹ ԱՐԱՄԵԱՆԻՆ ՍՊԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ

Փետրվարի 27-ին՝ Բաղուայ նահանգական դատարանի քրէական բաժնում Վ. Գ. Ս[illegible]օլսկու նախագահութեամբ և Տէր-Թովմասեան ու Պիգուլեսկի անդամների մասնակցութեամբ քննուեցաւ Ջամշոզ Արամեանի գործը, որ մեղադրւում է իւր եղբօր կնոջ՝ տիկ. Եղիսաբէթ Արամեանի կեանքի դէմ սպանութեան փորձ կատարելում։

Դատապարտեալին մեղադրում էր դատախազի օգնական Կուրմանովը։

Պաշտպանն էր Թիֆլիզի դատաստանական պալատի երդուեալ հաւատարմատար Գ. Տէր-Ստեփաննեանը։

Այս չորրորդ անգամն է, ինչպէս որ հաղորդում է «Կասպի» լրագիրը, որ գործը քննութեան է նշանակւում. Նախընթաց ժամանակներում յետաձգուել է տիկ. Եղ. Արամեանի բացակայութեան պատճառով որ արտասահման՝ Միւնխէն է բնակւում և որ այս անգամ եւս բացակայ էր։ Այսպէս նրա, այդպէս էլ վկաներից ոմանց բացակայութիւնը դատարանն օրինական համարելով, այս անգամ սկսեց գործի քննութիւնը։

Նախ կարդացուեցաւ մեղադրական ճառը, որի բովանդակութիւնը հետեւեալն է.

1893 թ. սեպտեմբերի 24-ին գիշերուայ 2 ժամին Բաղուայ ա. մասի ոստիկան Փիրադեանի մօտ է վազում պ. Ջոկով եզովը և յայտնում է, որ Ջամշոզ Արամեանը ատրճանակի հարուածով վիրաւորեց իւր քրոջը՝ տիկ. Եղիս. Արամեանին՝ վերջինիս բնակարանում, [illegible]յեանցի տանը։

Ոստիկանն ու տեղական բժիշկը տիկ. Արամեանի բնակարանն շտապելով, տեսնում են, որ տիկինը արիւնաշաղախ պառկած է մահճակալի վրայ իւր ննջարանում։ Այդ տեղից արեան՝ տեղ տեղ լճացած՝ հետքերը տանում էին դէպի միջանցք, հաշտը և պատշգամբը։ Տիկինն երկու վէրք էր ստացել. նա ցոյց է տալիս, որ փորձանքից քիչ առաջ նա իւր տագր Ջամշոզի հետ թատրոնից է վերադարձել, երկուսով ընթրել են, [illegible] պատշգամբն եւ դուրս եկել այդ տեղ տիկինը. դառնալով իւր տագրին խնդրել է իւր ձեռի [illegible] կոճակն արձակել. [illegible] այդ րոպէին Ջամշոզը ատրճանակը [illegible] է և տիկինը վիրաւորւում է երեսից։ Նրա և Ջամշոզի մէջ [illegible] յարաբերութիւններ են եղել, [illegible] տիկինը մի հանելուկ է ներկայանում, թէ ի՞նչ պէտք է իւր տագրին այդպիսի չարութեան դրդէր։ Նրա ամուսինը Մ. [illegible] Արամեանցը սեպտեմբերի առաջին օրերում իւր չորս փոքրահասակ [illegible] արտասահման է գնացել, [illegible] գործի համար։

Սպասաւոր Եղ. Զարուբեկեան ցոյց է տալիս, որ ընթրիքից յետոյ Ջամ. Ա. պատշգամբ դուրս եկաւ, որի յետեւից և տիկինը, [illegible] հաշտում էր, երբ թնդիւն և ապա [illegible] բարձր ձայն [illegible] տիկնոջը, որի երեսից արիւն էր հոսում և որ ննջարանն էր շտապում գոչելով «Եղօ, օգնիր»։ Նրա յետեւից Ջամշոզն էր գնում [illegible] ատրճանակ սա էլ գոչում էր «Օգնիր, [illegible] կանչիր»։ Դրանից յետոյ Ջամ. [illegible] շպրտեց ատրճանակը և փախաւ։

Խոհարար Սպ. Մանսուրեանց յայտնում է, թէ ինքը ճաշարանի մօտ [illegible] էր, [illegible] և երբ հաշտը դուրս եկաւ, տիկինը տեսաւ արեամբ ներկուած, իսկ նրա մօտ սպասաւոր Եղօյին և Ջամշոզին, որ շտապով հեռացաւ։ Իսկոյն [illegible] հասան միւս ծառաներն ու ազգականները, որոնք և միացած ուժերով [illegible]

—Աստուած յաջողեցրել է, մի անգամ ճանկս էք ընկել, գո՛ւք, հայի լափով կշտացող շներ, ինչ էք նայում, քաշէք գնանք։

Սբրամի ձեռի թափով եթէ զոմշի հաստ փորոցը իջնի մարդու մէջքին, գիտած տեղն ինչ հալի կըլի։ Այդ հարուածը ուտելուց յետոյ Թուրքերն իրանք էլ չիմացան, թէ ինչպէս փախս առած քաշ տուին ակները բաւական տեղ։ Վազելուց ու սրտի գալուց քիչ էր մնում շունչները փչեն, այնպէս հեւում էին։

Պէտք է բարձրանային մի սրուլիկ խիճոտ լեռ, որի գլխին հին ժամանակներից խաչ կար տնկած։

—Մեզ խաչի մօտ ո՞ւր ես տանում, Իբրահիմ աղա, թախանձում էին Թուրքերը։

—Թուրքին մինչեւ չթակես, բարեկամ չի դառնալ, ուղիղ է ասած։ Փետ երկու փորոց է գիպել մէջքներիդ, «աղա» էք կանչում ինձ, որ սպլում լինէի, «սուլթան» կասէիք։ Դեռ բարձրացէք, կանգնելու ժամանակ չէ, սարի գագաթից կը տեսնէք թէ հայի ուխտատեղիքը ինչքան սրտաբաց տեսարաններ են ունենում։ Ո՞վ գիտէ այնքան դուր գայ, որ մտադրուէք հայ դառնալու։ Հազար տարի է, ձեր Ալլահն էր զօրեղ, այսօր էլ գեավուր Իբրահիմի Աստուածն է զօրեղ գացել, քաշէք դէպի բարձր։

Այս ասելով մի մի փորոց էլ հասցրեց ուսախառը, մէջքախառը։ Թուրքերը թանչին տալով, գլուխները կռացրած մինչեւ գոտիկ՝ գնում էին սարն ի վեր և ամեն կերպ զգուշանում, որ չսկրհան։ Ահը սրտներումն էր. եթէ գայթէին և հաւասարակշռութիւնը կորցնէին, մինչեւ սարի տակը ակների եռնից մին պէտք է գլորուէին։ Տանջուելով, շնչասպառ լինելով, քափ ու քրտինք մտնելով հասան սարի գագաթը։

—Դէ հիմա կանգնեցէք, գոռաց Սբրամը, ու երեսներդ դէպի ժիլու (աղօթարան) դարձնելով հաշիւներդ վերջացրէք այս գունիայի հետ։ Դուք պէտք է ձեր արած անիրաւութիւնների պատիժը քաշէք։

Թուրքերն իրար երես նայեցին ու մնացին լռուած։

—Հաջի ու Սամփար, խօսեց Սբրամը, դուք շատ գողութիւններ էիք արել ու մարսել, ամբողջ «դզիան» (գաւառակը) զարհուրած էիք բերել, մինչ ձեզ բաւական չէր, որ մտքերումդ դրիք ինձ էլ գիպչելու։ Ես ձեզ ինչ էի պարտական, որ գոմէշներս տանում էիք։ Չգիտէի՞ք որ խուրձը արտումը կը մնայ, իսկ այն խրձան տէրը սուլթանի կառավարութեան «բաղալի», «ամլազ» և այլ անթիւ հարկեր պէտք է տայ։ Եթէ պահանջած հարկը չունենայ, մուլթազիմները հայ ռաշպարին պէտք է ծեծեն, բանտարկեն, կնիկն ու աղջիկը անպատուեն, անասունն ու կալուածը գրաւեն։ Բա՞ս դուք այս բաները չէիք մտածում։ Բա՞ հայը ադամորդի չէ, այսքան նեղութիւն կըլի՞, որ նրան տալիս էք։

—Զարար չունի, հայը նեղութեան սովոր է, կը տանի, խօսեց Հաջին։

—Ո՞ր մեղքի համար հայը պէտք է նեղութիւն քաշի, հարցրեց անվրդով կերպով Սբրամը, նա Աստուծու ստեղծած չի՞։

—Աստուծու ստեղծած աշխարհի վրայ շատ բաներ կան, ամենը հօ հալալ չեն, վրայ բերեց նոյն Թուրքը։

—Ուրեմն ձեր խօսքով հայը հարամ ադամորդիներից է։

—Բա ինչ է, պատասխանեց Հաջին։

—Հապա քիչ առաջ ինձ «աղա» էիր ասո՞ւմ. . .

—Հիմի էլ «աղա» ես, շտապով վրայ բերին Թուրքերը, նայելով հաստ փորոցին։

—Իսկ ձեր շահնան ինչ է՝ շուտով ասէք, սպառնաց Սբրամը փորոցը օդում ճօճելով։

—Մեր շահնան... շահնա՜ն՝ խուլյամ է։

—Նա մուկն է, շա՛ն ծնունդ, թէ չէ այսպէս փորոց կուտես, ասեց ու Հաջու մէջքին հասցրեց։

—Թէկուզ կատու էլ լինի, խօսեց կողկողագին Թուրքը։

—Իսկ ձեր գայմագամը, որ խեղճ ու արդար մարդկանց հարսները յափշտակում, տանում է, ինչ է, Սամփար։

—Աղա Իբրահիմ, այդ փորոցով ինձ մի խփիլ, ես կասեմ, որ նա համ շուն է, համ գայլ է։

—Ո՞ւրիշ, ո՞ւրիշ։

—Համ խոզ է, աւելացրեց Սամփարը։

—Ուրեմն Հաջի ու Սամփար չմուշներ, դուք փորոցի ցաւից ձեր մեծաւորներին համ շուն ու գայլ էք շինում, համ մուկն ու կատու, համ խոզ էլի՞։ Լաւ, ես այդ կասեմ նրանց, վրայ բերեց Սբրամը։

—Մենք էլ կուրանանք, որ այդպէս բաներ չենք ասել։

—Եթէ այդպէս սուտասու փուչ մարդիկ էք, էլ ինչո՞ւ պէտք է շունչ քաշէք երկրիս վրայ։ Դէ հիմա կորէք աչքիցս։

—Իբրահիմ աղա, Աստուած սիրես. մէջքներիս թոկը արձակիր, որ ոտի վրայ հանգիստ կանգնել կարենանք, յետոյ թէ կուզ փորոցի տակ չըրացրու։ Ամեն րոպէ փախենում ենք ակների հետ սարից գլորուենք։

—Ջուր էք փախենում. պէտք է գլորուէք, անվրդով պնդեց Սբրամը։

— Աստուած սիրես, խնայիր. մեզ ակներից ազատիր, գոչեցին նրանք։

—Չէ, անկարելի է. ինչպէս բերել էք, այնպէս էլ պէտք է տանէք։

—Աստծուն նայիր, Իբրահիմ աղա, մենք ո՞նց տանենք։

—Այսօր ես ոչ Աստծուն նայում եմ և ոչ ճանաչում, ակները պէտք է տանէք։ Թէ դուք յօժար չէք, նրանք ձեզ կը տանեն։

Թուրքերն սկսեցին լալ ու գոռալ, թախանձել, որ իրանց խնայի, ուրիշ տեսակ պատժի։

—Ոչ, իմ կամքն այսպէս է տալիս, կտրական եմ ասում, պէտք է ակների հետ սարի տակը գնաք, որ իմանաք թէ գեավուր Իբրահիմի ապրանքին խէթ աչքով նայելը ինչքան ծանր բան է։

—Այսքան խնդրում ենք Աստծու անունով, չես լսում, բա դու Աստուած չես ճանաչում։

—Ձեզ պէսներին տեսնելիս Աստուած մտքիս ընկնում է։ դուք պէտք է գլորուէք, էլ ոչ մի խօսք, գնացէք այսուհետեւ ինձ կանչեցէք՝ «Թանըրի թանըմազ»։

Հէնց որ ուզում էին Սբրամի ոտքից բռնել, նա նրանց այնպէս հրեց, որ ակների հետ հոսեցին դէպի ցած։ Երկաթապատ միակտոր հաստ ակները փոքր պատճառի էին մնում որ գլորուէին. վայր հոսեցին ու ետեւներից թրեւեցին կապ կըպած Թուրքերին։ Գահավէժ սարի գագաթին Սբրամը կանգնած նայում էր, թէ ինչպէս ակների ընթացքը հետզհետէ սաստկանալով հսկայական ոստիւններ են անում ու օդի մէջ Թուրքերին լախտի պէս խաղացնելով մէկ այս քարի ճակատով զարկում, մէկ այն, առանց մի վայրկեան միջոց տալու որ Թուրքերը կարողանան կանգ առնել։ Տեղ տեղ ակները հողաթմբի դէմ առնելով որ յանկարծ թափը չէին առնում ու թոկը ձգում, Թուրքերի մարմինները ծուլ կին լինում ակների կամ տակն ընկնում կամ առաջը։

Ակները երբ հասան լեռան ստորոտը, Սբրամը տեղից նոր շարժուեց աչքը շատ սրեց, որ նշմարի արդեօք շունչ կա՞յ վրաները թէ սպ ծուել են։ Դու ոչ մեռնիս, սատկած օձը նմանայնպէս լին մեկնուել որ խկի մռնգում էլ չէին։

Որդին հօրից շուտ էր հասել արիւնշաղախ գիակների մօտ։ Սբրամը ծանր մօտեցաւ, նրանց վրայ զզուական հայեացք ձգելուց յետոյ դարձաւ որդուն.

— Հաւաքիր թոկը, հիմա խուրձը բարձելու ժամանակ է, շտապիր. ես էլ ակները կբերեմ։

Որդին սարսափահար եղած Թուրքերի տարօրինակ վախճանով, անխօս վերցեց թոկն ու գնաց արտը։ Սբրամն էլ ակները ուսու հետ առնելով շալակը հետեւեց նրան։ Չաուշների մարմինը մնացին դաշտում, որ գիշակեր թռչունների կեր լինին։

Դրանց սպանման վրայ սկսեցին հայերին աւելի նեղել, մանաւանդ շահնան, որ անգութ կերպով բահրա էր պահանջում կալ ու կասի միջոցին։ Սբրամի ատամը վաղուց մազ էր մանում նրա վրայ։ Երբ եկաւ նրա կալը և սկսեց աւելորդ գրփել ու հայհոյել հայ քրիստոնէի հաւատը, օրէնքը, Սբրամը մի քանի անգամ զգուշացրեց, որ ձայնը կտրի. անեբրես Թուրքն աւելի սաստկացրեց իւր հայհոյանքն ու անարգանքը դէպի նրա ընտանիքը։ Սբրամն այդ ժամանակ էլ չհամբերեց, ձեռի եղանն այնպէս ուժով խրեց շահնայի սրտի զգալում, որ ծայրերը մէջքով դուրս եկան այդպէս շամփրած բարձրացրեց շահնային ու կալի մէջ խփեց գետնով։

— Թող ինձ աշխարհքը «Թանըրի թանմազ» ասի, բայց ես կարծում եմ որ իսկ Աստուածպաշտութիւնը իմ արածն է, որ նզովուած հոգիները մէկ մէկ գժողք եմ ուղարկում։

Այդ անելով Սբրամը վճռել էր թողնել Խասգիւղը ու հեռանալ Մուշի կողմերից, որ գայմագամը փաշայ շուտով իր հետքը չգտնեն։ Վերցրել է իւր թախումը (երախաները) և գաղթել Բաշգեղ։ Այդ ժամանակ այս կողմերն այն քան վայրենի է եղել, որ «դմբուլցիք» են բնակուել եղել։ Սբրամը խոսկել հանձել է վայրենի քրդերին ու ինքը իւր թախումով բնակուել։ Կամաց կամաց Սբրամի մօտ են եկել Խասգեղից շատ ընտանիքներ և մեծ շինութիւն արել ինչպէս տեսնում եմ։

Սբրամին չեն կարացել վնաս տալ ոչ Թուրքերը և ոչ քրդերը։ Նրա անունից ամենն էլ զարհուրելիս են եղել։ Այն ժամանակուանից «Չաշլի անունը կպել է «Թանըրի թանըմազանց»։

Բայց ինքը եղել է բարեսիրտ ու աղօթաւոր, ինչպէս որ հիմի նրա ծոռներն ու թոռներն են Բաշգեղում հացով և հիւրասէր։

Սբրամի ուժի և քաջագործութեանց մասին լսելով եմ ասում, բայց ես աչքով տեսել եմ նրա թոռ Բրոյին (Բարսեղ) որ 90 տարեկան մեռաւ։ Ա՛յ հսկայ ու քա՜ջ մարդ։ Սողանլուխի անտառի շուրջ էլ քուրդ չկար, որ Բրոյի անունից չդողար։ Հիմի ո՞ւր են այնպիսի ուժեղ, ազնիւ պաշտպան մարդիկ։

Այսպէս վերջացրեց ծերունի Սրմէն «Թանըրի թանըմազ» անուան պատմութիւնը։

Փ[illegible]եան Ս.

Ննջարան տարան և մահճակալի վրայ պառկացրին։

Նոյն ժամին հրաւիրուած բժիշկներին՝ Գալոկերին և Զալինին, տիկ. Արամեանը յայտնում է թէ ատրճանակ արձակողը Ջումշուդն էր, բայց թէ ինչից դրդուած այդպէս արաւ, իրեն անհասկանալի է. միայն կարծում է, որ իւր ամուսին Միքայէլ Արամեանի գիտութեամբ կարող է կատարուած լինել։

Անկասկած արդար են տիկ. Եղ. Արամեանի ցուցմունքները, թէ, իրեն յայտնի չեն Ջումշուդին դրդող պատճառները։ Այդ պատճառները՝ չնայած քննութեան ժամին ձեռնարկած բոլոր միջոցներին, անորոշութեան մէջ մնացին։ Բայց և այնպէս՝ որպէս վերոյիշեալ վկաների, նոյնպէս և ուրիշների ցուցմունքներով հաստատուած է, որ վիրաւորուած տիկնոջ և նրա ամուսնու՝ Միք. Արամեանի մէջ յաճախ ընտանեկան ծանր խռովութիւններ են տեղի ունեցել. այդ խռովութիւններն այնտեղ են հասել, որ անցքից քիչ առաջ՝ սեպտեմբերի առաջին օրերում Միքայէլ Արամեանը տանու վարժուհի Հենրիետ Լեամէնի հետ վերցրել է իւր փոքրահասակ երեխաներին և արտասահման գնացել։ Ցանկանալով Արամեանի տունը՝ Ջումշուդը նըկատել է ընտանեկան կռիւները և ըստ երևոյթին, համոզուել է, որ իւր եղբայրը՝ Միքայէլը կնոջը չէ սիրում։ Ինքը Ջումշուդը բոլոր ազգականներից աւելի սիրելի և մօտ է եղել Միքայէլին։ Ցանկանալով գործով ցոյց տալ եղբօրն իւր անձնուիրութիւնը՝ Ջումշուդը, ինչպէս անկիրթ և կոպիտ (այդպէսն ցոյց տալիս վկաները) մարդ, բնականաբար ինքը՝ առանց Միքայէլի գործակցութեան և գիտութեան, վճռել է եղբօրն ազատել չսիրած կնոջից։ Այդ միտքն իրագործելու համար պատեհ ժամ է համարել անցքի գիշերը։

Քննութեան կանչուելով Ջումշուդ Արամեանը սկզբում իրեն այդ գործում մեղաւոր չէ համարում, յայտնում է, որ անցքի ժամանակ իւր ձեռքին ատրճանակ չէ եղել, թէ Եղիսաբէթ Արամեանն ինքն է ինքնասպանութեան փորձ արել, թէ մի ամբողջ տարի նա յաճախ ինքնասպանութեան մասին էր խօսում։ Յետոյ՝ երևի զգալով, որ անցքի բոլոր պարագաներին հակասող վկայութիւն է տալիս, Ջումշուդ Ար. ուրիշ կերպ է բացատրում։ Նա յայտնում է, թէ ինքը պատրաստւում էր Սև քաղաք գնալու, պատշգամբին կանգնած՝ ոտնեց էր և տիկ. Արամեանը, գնդակները ատրճանակի մէջ էր դնում, յանկարծ ատրճանակի ոտքը վայր ընկաւ, որաչից և Եղ. Ար. վիրաւորուեց։

Սակայն Ջ. Արամեանի այս վերջին բացատրութիւնն էլ գործի բոլոր պարագաներին չէ համապատասխանում։ Միւս կողմից մեղադրեալի խօսքերի վրայ հիմնուելով գիտակ ու հմուտ մարդիկ բացատրում և հաստատում են, որ ատրճանակն ինքն իրան չէր կարող արձակուել, այդ գիտութեամբ է եղել։

Վերոյիշեալների հիման վրայ և համաձայն դատ. օր. 1260 յօդ. Ջում. Արամեանը Բագուայ Նահանգական դատարանի քննութեանն է յանձնւում։ Նա մեղադրւում է նրանում, որ 1893 թ. սեպտեմբերի 24 ի գիշերը 2 ժամին նա՝ թէև առանց նախապէս մտածած ցանկութեան, բայց և այնպէս գիտութեամբ իւր եղբօր կնոջն սպանելու նպատակով, ատրճանակ է արձակել և վիրաւորել է նրա դէմքը, իսկ ցանկութիւնը չէ կատարուել միայն այն պատճառով, որ վէրքը մահացու չէ եղել։

Դատարանում մեղադրեալը յայտնեց, որ ինքն իրեն մեղաւոր է ճանաչում եղբօր կնոջ վրայ ատրճանակ արձակելու համար, միայն չկամեցաւ բացատրել, թէ ինչից դրդուած այդպէս վարուեցաւ։ Վկաներին հարցաքննելուց, իրաւաբանիչներին հարցաքննելուց և բացակայ վկաների ցուցմունքներն կարդալուց յետոյ՝ ճառերն սկսուեցան։ Մեղադրողը հիմնուելով քննութեան տուած փաստերի, որոնք մեղադրում են Ջ. Ար.-ին. և նրա խոստովանութեան վրայ, խնդրում է՝ զրկել նրան սեփականութեան բոլոր իրաւունքներից և 6 տարի 8 ամիս ժամանակով տաժանակիր աշխատանքի ուղարկել։

Պաշտպանը իւր ճառի մէջ ցոյց տալով մեղադրեալի անկրթութիւնը և նրա հիւանդ դրութիւնը՝ չարագործութեան ժամանակ և նրանից յետոյ, որ ապացուցւում է բանտի բժշկի վկայականով, ամենաթեթև պատիժ նշանակել՝ աչքի առաջ ունենալով և ամենաողորմած հրամանագիրը։

Դատարանը՝ կէս ժամ խորհրդակցելուց յետոյ, յայտնեց իւր եզրակացութիւնը. Ջում. Արամեանին մի տարի և ութ ամիս ժամանակով բանտարկել. 50 ռ. աւելի դատաստանական ծախքերը գանձումն հաշուին թողնել, մեղաւորեալից՝ որպէս պարտաւորեալի երեք հազար ռուբլի պահանջել։ Այդ գումարը այնտեղ պատուոնում ներկայացրեց մեղադրեալի պաշտպան Տէր-Ստեփանեանը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

† ՍԵՐ ՀԵՆՐԻ ՐՕՈւԼԻՍՕՆ

Ինֆլուէնցիային զոհ է գնացել, ամսոյս 5-ին, երևելի արևելագէտ սեր Հենրի Րաուլինսօնը իւր 85 ամեայ հասակում։

Նա վերին աստիճանի բազմազան ու ճոխ ձիրքերի տէր անձն էր, ասում է անգլիական լրագիրը, և նըշանաւոր գործնական կեանքի և գիտութեան այլ և այլ ասպարէզներում։ Երիտասարդութեան ժամանակ նա մի քաջ զինուոր էր, միևնոյն ժամանակ և կորովամիտ դիւանագէտ, որ կարող էր համարձակ մրցել իւր հայրենիքի ամենալաւագոյն պետական անձանց հետ։ Պարսկաստանում նա մեծ դեր է կատարել իբրև պատամիտ կուսակցութեան անդամ։ Բայց նրա գլխաւոր արժանիքն այն է, որ նա առաջնակարգ արևելագէտ էր, մէկն այն անուանի գիտնականներից, որոնց ջանացել են կարդալ Արևելքի սեպագիր արձանագրութիւնները, մինչեւ դրանք չնայելով գիտնական աշխարհին ծածուկ ճիգերին, հազարաւոր տարիներ 'ի վեր անլուծելի էին մնացած։

ՖՐԱՆՍԻԱ.— Այս տարի պատգամաւորների պալատն առանձին ուշադրութիւն է դարձրել զինուորական ծախքերի նախահաշուի վրայ։ Ֆրանսիական զինուորական կազմակերպութեան մէջ շատ նշանաւոր փոփոխութիւններ կլինեն և դրա պատճառն այն է, որ Գերմանիան զինուած է և շարունակում է զինուել։ Պալատի նիստն սկսուեց զինուորական յանձնաժողովի անդամ Ժիւլ-Րօշի ճառով։ Պ. Րօշը իր երկար ճառի մէջ նկարագրեց ֆրանսիական զօրքի այժմեան վիճակը, որ համեմատութեամբ գերմանական զօրքի շատ անմխիթարական է, Րօշը պահանջում է որ ֆրանսիական զինուորական ոյժը մեծացնեն, հակառակ դէպքում եթէ պատերազմ լինի, կարդարանայ Բիսմարկի սպառնալիքը, որով նա յայտնում էր թէ «առողջ Ֆրանսիայի արիւնը կըծծեն գերմանացիք.» Րօշի խօսքերը մեծ տպաւորութիւն թողեցին պալատի անդամների վրայ, որոնք երկար ժամանակ ծափահարում էին ճառախօսին։

ԳԵՐՄԱՆԻԱ.— Իշխան Հօհէնլօհէն ամառը կըճանապարհորդէ դէպի Իտալիա Հումբերտ թագաւորին ներկայանալու Մոնցում և Կրիսպիի հետ տեսակցելու համար։

Պրուսական պատգամաւորների մասնաւոր նիստը, Իշխան Բիսմարկի ծննդեան օրը տօնախմբելու համար, ոչ մի հետևանք չունեցաւ, առաջարկուած տօնախմբութիւնը մեծ դիմադրութեան հանդիպեցաւ կենդրոնի, լեհերի և լուսաւորականների կողմից։

Բեռլինի մագիստրատները իշխան Բիսմարկին ընծայեցին իրանց համաքաղաքական պատուաւոր անդամ և իշխան Բիսմարկ ընդունեց այդ կոչումը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մարտի 3 ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Բարձրագոյն հրաման «1884 թուականից սկսած Մեր անունով տրուած խնդիրների ընդունելու և նրանց ընթացք տալու պարտաւորութիւնը դրած է Կայսերական գլխաւոր պալատական հրամանատարի վրայ։ Տասնամեայ փորձը ցոյց է տալիս որ վերին աստիճանի դժուար է այդ պարտաւորութիւնը միացնել միւս անմիջական պարտաւորութիւնների հետ որ ունի պալատական գլխաւոր հրամանատարը։ Այդ պատճառով բարի համարելով Մեր անունով տուած խնդիրների ընդունելը յանձնել առանձին անձնաւորութեան, որ կանուանուի առանձին մասին կառավարչապետ, հրամայում ենք. 1) Մեր անուան մատուցուած խնդիրների դիւանը բաժանել գլխաւոր պալատական տան կազմակերպութիւնից և անուանել «Դիւան Նորին Կայսերական Մեծութեան, Բարձրագոյն անուամբ մատուցած խնդիրներ ընդունելու համար» 2) Մինչև օրինական ճանապարհով գլխաւոր կառավարչի պաշտօն հաստատելը Բարձրագոյն անուամբ մատուցուած խնդիրները ընդունելու իրաւունքը ժամանակաւորապէս թողնել կայսերական գլխաւոր հրամանատարին, մինչև այժմ եղած կարգով. 3) Կայսերական գլխաւոր տան հրամանատարը անյապաղ պէտք է կազմէ և ներկայացնէ Պետական խորհրդի բարձրաձ վճռին նոր վերոյիշեալ պաշտօնները հաստատելու ծրագիրը և այն փոփոխութիւնները, որ պէտք լինեն Մեր անուան մատուցուելիք խնդրագրերի մասին։

ԱԹԷՆՔ.— (Հավաս) Յունական արքայական ընտանիքը Թագաժառանգի Յեսարևիչի հետ հանդիպումը Կորֆուում շատ սրտագին էր։ Նշանաւոր Նորին Անձնուիրութիւնը և Նորին Բարձրութիւնները ուղևորուեցին Մոնրէպօ։

ՎԵՆՆԱ.— «Polit. Corresp.»-ին հաղորդում են Լոնդոնից թէ Չինաստանը դիմել է եւրոպական բոլոր պետութիւններին և Միացեալ-Նահանգներին ու խնդրել որ օժանդակեն իրեն Ճափոնիայի հետ խաղաղութեան դաշն կապելու բանակցութիւններում։ Այդ առթիւ երեք պետութիւնների մէջ կարծիքների փոխանակութիւն կը լինի։

ԼՈՆԴՈՆ.— Հեռագիր Խիրօշիմից.— Պաշտօնական աղբիւրից հաղորդում են թէ չինական լիազօրները Տեանզինից ուղևորւում են վաղը։ «Շանգհայից հեռագրում են. «Թէև Լի-Հունգ-Չանգը տրամադրուած է ճափոնիայի առաջարկած պայմաններն ընդունել, այնու ամենայնիւ ճափոնական բարձր շրջաններում քիչ են հաւատում խաղաղութեան դաշն կապելուն։ Ճափոնիայի բանակը ձգտում է մտնել Պեկին, հակառակ է համարւում որ ճափոնական կայսրը կը պատասխէ Լի-Հունգ-Չանգին։

ԶԱՆԱԶԱՆ

Եօժենի կայսրուհու խոստովանահայրը. Լըուրդի գաղաթին հետևում էր մի կարճահասակ, մաղի պէս ցեղնած դէմքով, երկայն մօրուքով և թանձր պեհքով անձն։ Ոչ ոք նորա վերայ ուշք չէր դարձնում, այն ինչ այդ անձը երբեմն Ֆրանսիայում մեծ դեր էր խաղում և այդ Լըուրդի յաղթանակի ժամանակն էր։ Դա էր Բառւէր եպիսկոպոսը, Եօժենի կայսրուհու խոստովանահայրը, յայտնի քարոզիչ, որ օրինեց Սուէզի ջրանցքը կայսրների, թագաւորների և իշխանների ներկայութեամբ։ Այս անձը, որ երբեմն մեծ կշիռ և ոյժ ունէր, այժմ ոչինչ է։ Բեռնհարդ Բառւէր, ազգով հրեայ, ծնուած է Բուդապեշտում։ 19 ամեայ հասակում նա մասնակցում էր Վիեննայի մարտի յեղափոխութեան, որի համար Կօշուտը հրապարակաւ գրկեց նրան և իբրև Վիեննայի ակադեմիական լեգէոնի ներկայացուցիչ ուղարկեց նրան Փարիզի ուսանողների մօտ։ Այստեղ Բառւէրը մի քանի ժամանակ ապրում էր Բաղնում, ուր բարեկամացաւ Ֆէյէրբախի հետ։ Նա պարապում էր գեղարուեստով և 1851 թ. գնաց Իտալիա։ Ճանապարհորդութեան ժամանակ նա ծանօթացաւ մի ֆրանսիացու հետ, որ իւր մօր օգնութեամբ, համոզեց նրան կաթոլիկ կրօնն ընդունել։ 1854 թ. նա բարեկամացաւ հայր Ռեգուասոնի հետ, (երբեմն դաշնակահար Հերման Կօգէն) և սորա ազդեցութեամբ կրօնաւորեցաւ Կամելիտների վանքում։ Այնուհետև հայր Մարիոս Բեռնհարդ անուամբ նա սկսեց քարոզել Ֆրանսիական քաղաքներում և գրաւեց բարձր հասարակութեան ուշադրութիւնը։ Նորա համբաւը հասաւ Եօժենի կայսրուհուն, որ հրամայեց այդ կրօնաւորին Փարիզ հրաւիրել մեծ պասի ժամանակ „Notre Dame“-ի մայր եկեղեցում քարոզելու համար։ Կանայք հիանում էին նոր քարոզչի վերայ։ Նա փառաւոր ընդունելութիւն և յաջողութիւն ունեցաւ արքունիքում։ Կրօնաւորի գունատ դէմքը, հրճուապատած սև մօրուքով, գեղեցիկ, կապոյտ աչքերը և մանաւանդ նորա քնքոյշ ձեռները կանանց վերայ զօրեղ տպաւորութիւն էին գործում։ Կրօնաւորը խօսում էր յափշտակիչ եղանակով, բայց մեծի մասին դառնում էր դէպի կանանց և գիտէր նրանց սիրտը շարժել. Կայսրուհին կամենալով նորան Փարիզում պահել, իրան խոստովանահայր ընտրեց և եկեղեցական իշխանութիւնը նրան եպիսկոպոսական աստիճան տուեց և այսպէս նա ամենքի ուշադրութեան առարկան դարձաւ։ Ամենքը կամենում էին նրան խոստովանել։ Նորա բնակարանը Ֆլօրէնտեան փողոցում լի էր խնդրագրերով։ Վրայ հասաւ պատերազմը և ապա հանրապետութիւնը։ Մոնսինեօր Բառւէրը թողեց կուսակրօնութիւնը և հրաժարուեցաւ կաթոլիկ կրօնից։ Կրօնաւորի դերը կատարած պրծած էր, նա աշխարհական դարձաւ և Փարիզը նրան մոռացաւ։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱւՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԲԺԻՇԿՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների.

Կ. Մ. ՉԻԿԱՐԵԱՆ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՒԼԱԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈւԼԻԶ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ԴՈՒԲՐԻՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒԲՐԻՕ բժիշկ-խորհրդատուական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն.

Վճար 50 կ. Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին.

Հիւանդանոցումը ընդունւում են և ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ [illegible]

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԲԺՇԿ. ԴՈԿՏՈՐ ՍԻՍԵՏԻՔ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիեւսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրւում են նաև զանազան տեսակ ՋՐԱՅԻՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ և այլ ֆիզիքական միջոցներ.

ՆԵՐՔԻՆ և ՆԵՐՎԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունւում են ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը — կինարմատներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան — տղամարդիկ.

Ընդունարանում գտնւում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժ անող կին և մասսաժիստ պարոն.

Քաղաքային հիւանդանոց

(Միխայլովեան փ., տ. Կուզանեանց, № 15. Հիմնել են Թիֆլիսի քաղաքացի ներք երեխեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի միջոցովին).

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. [illegible] — Ներքին, երեխայոց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն օր.

Ա. Գ. [illegible]—Ներքին և երեխայոց, ժ. 10½—12 ամեն օր.

Գ. Գ. [illegible]—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր.

Բժշկուհի Գ. [illegible]—սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր.

Մ. Ն. [illegible]—Ներքին և վեներական, ժ. 12—1 ամեն օր՝ բացի հինգշաբթի.

Բժ. Մ. [illegible]—Ներքին հիւանդութիւն. 12—1 ամեն օր.

Բժ. [illegible] — Ներքին և երեխայոց հիւանդ. 12—1 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ն. [illegible]—կանանց ժ. 9—11 ամեն օր.

Ն. Կ. [illegible] — Ներքին և երեխայոց, ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Լ. Ն. [illegible]—կանանց, ժամը 11—12 ամեն օր.

Ն. Ն. [illegible]—Ներքին, երեխայոց և աչքի, ժամը 9—10 ամեն օր.

Մ. Ն. [illegible]—Ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր.

Գ. Ն. [illegible]—Ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 12—1 ամեն օր.

Գ. Ռ. [illegible] — Ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր.

Կին-բժ. Ս. Ն. [illegible]—աչքի և կանանց, ժամը 12—1 ամեն օր.

[illegible] Ա. Օ. [illegible]—ատամներ. ժամը 10—11 ամեն օր.

Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստում—չորեքշաբթի և շաբաթ օրեր. ժամը 9—1.

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԸ

(Խախէթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ն. [illegible]—ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ն. [illegible]—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա փողոց, տ. Ենիքիաճեանի)

Գ. Բ. Տէր-[illegible]—ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը.

[illegible].—Զրաւոր անձերին բըժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի.

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝— Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզ Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին.

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին.

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան.

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑԻ
աշխատասիրած

I. «ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ» պատմական վէպ 11-րդ դարու և II. «ՏԱՆՋԱՆՔԻ ԲՈՎԻՑ» վէպ իրական կեանքից։ Երկու գրքի բաժանորդագինն է մէկ ռուբլի. տպագրուելուց յետոյ գինը կը բարձրանայ. Դիմել՝ Тифлисъ, Баграту Айвазянцу, Эчміадзинская улица № 20 կամ կենդրոնական գրավաճառանոց։ (3—1)

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12-ը և երեկոյեան 6—7-ը։ Գօլովինսկի Պրօսպեկտ տուն Ալեւովի.

ԼՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
„Բարեգործութեան դիմակի տակ“
Դրամս 5 գործողութեամբ.
(ԹՕՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԲԵՄԻ ՎՐԱՅ)
Դիմել —Տ[illegible]. կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներին, Ալ[illegible]. հեղինակին։

Յ. ԹԱՅԻՐԵԱՆԻ և Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆԻ
ՁԻԹԱՀԱՆ և ՕՃԱՌԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

այս Մեծ պասի համար առաջարկում է քունջութի, փուշի, կանեփի յէՊ՝ [illegible] մէջ գործածելու, նմանապէս կաստորեան, կանթեղի և ներկելու համար ոչ միայն ձէթ, այլ և բարձր տեսակի [illegible]։

[illegible] ծախւում են գեղատեսիլ ապրանքների Կովկասեան ընկերութեան վաճառատանը. Ջօլանեսի մօտ՝ Գոլովինսկի պրոսպեկտ, տ. Գորրժանսկու, և Վորոնցովի արձանի մօտ՝ Դարչօ Բոկարովի մօտ, Նիկոլաևսկայա փ., Ալէքսանդրովսկայա եկեղեցու դիմաց. Զալմանեանցի մօտ՝ Պանաշէևից փ., տ. № 1.

[illegible] ծախւում են սեպհական խանութներում—Միքայէլեան փ. տ. Կարալեանի, Վորոնցովի արձանի մօտ. Սոլդատսկի բազարում՝ տուն Բուդաղեանեանի. Թուրքաց մէյդանում՝ քաղաքային խանութ. Հաւլաբարի հրապարակում՝ քաղաքային խանութ, և Օլգինեան փողոցում՝ տուն Մերուրնեանի։

Մեծ [illegible] ծախւում են գործարանում՝ Խրիմանսկոյէ շօսէի վրայ, սեպհական շինութեան մէջ։ (8—4)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՍՏԱՆԻՍԼԱՎ ՉԱՐԱԽՉԻԱՆՈՎԻ
Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff
Maison fondée en 1870
(Դվորցովայա փողոց, չտարի հանդէպը)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԵՒ ԳԱԼԱՆՏԵՐԵԱՑԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ.—

ԿՈՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած. ԳԼԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար. ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ—անուշաբոյր օծանելիք՝ գլխաւոր գործարաններից։ Ձեռնոցներ, գուլպաներ, հովանոցներ, ծաղիկներ, հովհարներ, ալբոմներ, նեսեսէրներ, պօրտ-մոնէ։ Բիւրեղեայ, յաղճապակեայ զարդարանքի իրեղէններ։ Ճեպ խրբ ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ։

Օտարաքաղաքացոց պատուէրները կատարւում են ամենայն ճշդութեամբ։ (100—94)